№ 188 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՕԳՈՍՏՈՍԻ
1914
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՕԳՈՍՏՈՍԻ № 188
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիվ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրէժի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՈՒԹԴԱՍԵԱՆ ԿԱՆԱՑԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Պետական ուսումնարանների ԲՈԼՈՐ իրաւունքներով։
Հիմնադիր՝ Լ. Փ. ՊԵՏՐԱՇԵՒՍԿԱՅԱ.
(Միքայէլեան փողոց, № 170)
յայտնում է, որ ընդունելութեան քննութիւնները մեծ ու փոքր պատրաստականների համար՝ օգոստոսի 23-ին։ I, II և III դասար. օգոստոսի 25-ին և 26-ին։ IV և V դասար. օգոստոսի 27-ին և 28-ին։
ՈՒՍՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ։
Մայրենի լեզուն հայերի և վրացիների համար պարտադիր է առաջինից մինչև վերջին դասատունը։
Խնդիրները տեսչի անունով ընդունվում են ամեն օր մինչև 12 ժամը ցեր.։ Տեսուչը անձամբ ընդունում է մինչև օգոստոսի 20-ը՝ ցեր. 12—1 ժ., իսկ օգոստոսի 20-ից յետոյ ամեն օր։
առ. (օ. մ.) 772. 6—6

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
վերադառնալով՝
վերսկսեց ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խաւան ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.
առ. 798. 5—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամեն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (ա. օ.) 804. 0—3

Ս. ԵՍԱՅԵԱՆԻ
ընտանիքում կարող է ընդունվել մէկ կամ երկու փոքրահասակ ԳԻՇԵՐՕԹԻԿ աղայ առաջիկայ ուսումնական տարվանից։ Բնակարանը գտնվում է Զերքեզովսկայա փող. № 3, Վորոնցովի արձանից ոչ հեռու։ Պայմանների մասին խօսել անձամբ «Մշակի» խմբագրատան, ժ. 10-ից մինչև 2-ը ամեն օր։
առ. 805. 3—3

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատերազմը մի դաշտ է, որ սփռված չէ վարդերով միայն, այն է յաղթութիւններով. այդ դաշտի վրա հանդիպում են մարդիկ և՛ փուշերի ու տատասկների, այն է անաջողութիւնների։ Երբ անցեալ շաբաթ ռուսական զօրքը, որ յաղթական կերպով արշաւում է Արևելեան Պրուսիայում, հանդիպեց անաջողութեան և պատերազմի դաշտի վրա ընկան գեներալ Սամսոնով և մի քանի այլ սպաներ, այդ հանգամանքը, անշուշտ, վիշտ պատճառեց մեզ ամենքիս։ Սակայն ոչ մի կասկած չը կայ, որ, ինչպէս ասված էր և Գերագոյն Զօրահրամանատարի պաշտօնական ծանուցման մէջ, ռուսական բանակը ամեն ջանք գործ կը դնի հակահարուածել այդ մասնակի անաջողութիւնը, որ չէր կարող ազդել ճակատամարտի վերջնական ելքի վրա, այլ միայն դանդաղեցնել պատերազմական գործողութիւնների արագ ընթացքը։

Եւ Գերագոյն Զօրահրամանատարի և մեր ամենիս սրտաբուղխ յոյսը աւելի շուտ իրագործվեց, քան սպասվում էր։ Ռուսական զօրքը փառաւոր յաղթութիւն տարաւ Գալիցիայում, աւստրիական զօրքերի դէմ, գրաւեց այդ երկրի մայրաքաղաք Լեմբերգը կամ Լվօվը (այն քաղաքը՝ Իլօվ անունով, ուր մի ժամանակ բնակութիւն էին հաստատել Անիից գաղթած հայերը, որոնք այնքան մեծ հալածանքներ և նեղութիւններ կրեցին իրանց դաւաճան եպիսկոպոս Նիկոլից) և ջարդ ու փշուր արեց աւստրիական 200,000-անոց բանակը։

Դա, անկասկած, ամենախոշոր և նշանաւոր մի յաղթութիւն է, որ, շատ ռազմագէտների կարծիքով, կարող է նոյն իսկ նախորոշել աւստրո-ռուսական պատերազմի ելքը յօգուտ Ռուսաստանի, որովհետև 200,000-անոց բանակի ջախջախումը անդարմանելի հարուած կը հասցնի աւստրիական զինուորական ուժին։ Այդ յաղթութիւնը կողմնակի հարուած է և գերմանական զօրքին, որովհետև ռուսական զօրքը ջարդելով աւստրիական զօրքը և գրաւելով աւստրիական երկրները, անզօր և անպէտք դարձնելով Աւստրիան, որին միւս կողմից զօրաւոր հարուածներ են հասցնում և սերբերը, կը մտնի Աւստրիայի միջով Գերմանիա և այդպիսով երկու կողմից կը հարուածի Գերմանիան՝ հարաւից և արևելքից։ Արևելեան Պրուսիայում ևս ռուսական զօրքը դարմանում է իր կրած մասնակի անաջողութիւնները և նորից առաջ է խաղում, արշաւելով։

Այսօր համայն աշխարհի աչքերը սևեռված են ռուսական զօրքի վրա, որովհետև ամենքը գիտեն, որ գերմանական հզօրութիւնը խորտակողը կարող է լինել միայն Ռուսաստանը։ Իսկ չը պէտք է մոռանալ, որ Գերմանիան արհամարհելի քանակ և որակ չէ։ Ռուսաստանի միւս դաշնակիցները՝ անգլիական, բելգիական և ֆրանսիական զօրքերը կարող են առ այժմ միայն կասեցնել գերմանական զօրքերի առաջխաղացութիւնը, ջլատել նրա ուժերը, բայց վճռական հարուածը Գերմանիային կարող է տալ միայն Ռուսաստանը։ Այդ շատ լաւ զգում է ինքը Գերմանիան, ուստի և անհաւանական չը պէտք է թւան այն լուրերը, որոնք յայտնում են, թէ գերմանական դիպլոմատիան աշխատում է անջատ, առանձին հաշտութիւն կնքել Բելգիայի, Ֆրանսիայի և Անգլիայի հետ։ Եւ, անշուշտ, այդ աղէտի—որովհետև այդպիսի անջատողական հաշտութիւնը մեծ աղէտ կը լինէր ընդհանուր գործի համար, որ է նկուն անել, ջախջախել տևտօնական բռնակալութիւնը — առաջն առնելու համար է, որ դաշնակից պետութիւնները՝ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան կնքեցին այժմ դաշնագիր, որի զօրութեամբ ոչ ոք նրանցից իրաւունք չունի անջատ հաշտութիւն կնքել։ Այդ նոր համաձայնութիւնն ևս մի խոշոր հարուած է Գերմանիային։

Ոչ նուազ խոշոր հարուած է և Գերմանիայի համար Ֆրանսիական կառավարութեան որոշումը՝ տեղափոխել կառավարութեան կենտրոնը Պարիզից Բորդօ։ Դա՝ մի իմաստուն որոշում է, հիմնված անցեալի փորձառութեան վրա։ Երբ 1871 թ. գերմանացիները պաշարեցին Պարիզը, Ֆրանսիական կառավարութիւնն ևս պաշարված մնաց և անկարող եղաւ կառավարել երկիրը կամ կարգադրութիւններ անել, այնպէս որ ֆրանսիացիները, ղեկավարութեամբ Գամբէտտայի, ստիպվեցին նոր, ժամանակաւոր կառավարութիւն հաստատել Բորդոյում։ Ահա այդպիսի մի դէպքի կրկնութեան առաջն առնելու համար է, որ ֆրանսիական կառավարութիւնը տեղափոխել է իր աթոռը Բորդօ, որպէսզի ազատօրէն կարողանայ հարկաւոր կարգադրութիւններն անել հայրենիքի պաշտպանութեան համար այն դէպքում, եթէ գերմանացիները պաշարեն Պարիզը։ Անշուշտ, թէ այս հանգամանքը և թէ այն, որ Պարիզի բնակիչներից շատերը հեռանում են մայրաքաղաքից, առիթ է տալիս ենթադրելու, որ, ուրեմն, Պարիզի պաշարումը մօտալուտ է, ուրեմն ֆրանսիական զօրքերը պարտութիւններ են կրել և այլ ևս անկարող են դիմադրել թշնամու արշաւանքին։ Սակայն փաստերը այլ կերպ են խօսում։ Ճիշդ է, գերմանական զօրքերը հասել են մինչև Կոմպիէն, որ շատ մօտ է Պարիզին, ուստի և կարող են շուտով պաշարել և Պարիզը, բայց նախ, եթէ գերմանական զօրքերն անարգել առաջ են խաղացել և հասել մինչև Կոմպիէն, այդ ոչ թէ նրա համար, որ ֆրանսիական զօրքերը ճակատամարտի մէջ պարտվել են, ոչ—քանի որ ոչ մի ճակատամարտ տեղի չէ ունեցել այդ շրջանում,—այլ որովհետև ֆրանսիական զօրքերն իրանք են նահանջում դիտմամբ, չեն դիմադրում և, ըստ երևոյթին, չեն դիմադրելու նաև արշաւման Պարիզի վրա, որոշ ռազմագիտական նկատումներով։ Երկրորդ. Պարիզը առնելը շատ էլ հեշտ չէ, քանի որ նա շրջապատված է շատ անառիկ ամրոցներով։ Ֆրանսիական զօրքը, ըստ երևոյթին, առ այժմ իրան նպատակ է դրել թոյլ չը տալ, որ գերմանական զօրքերը կենտրոնանան մի վայր՝ ռուսական զօրքի դէմ, և նահանջելով, քաշելով թշնամուն երկրի խորքը՝ սպասում է, որ Ռուսաստանը կարողանայ իր ամբողջ ուժը գործ դնել Գերմանիայի դէմ։ Իսկ չէ՞ որ Ռուսաստանը մինչև այսօր իր կենտրոնական զօրքը տեղից չէր շարժել. մինչև այսօր գործում էին ռուսական հզօր զօրաբանակի միայն երկու թևերը՝ աջը և ձախը. առաջինը Պրուսիայի դէմ, երկրորդը՝ Աւստրիայի դէմ. կենտրոնը, որ ամենագլխաւոր ուժն է, դեռ չէր շարժվում և պատերազմի դաշտը չէր դուրս գալիս, և միայն այժմ, ինչպէս հաղորդեց հեռագիրը, Վիսլա և Բուգ գետերի միջև բանակած կենտրոնական զօրքին հրամայված է առաջ խաղալ և արշաւել։ Հետևաբար, եթէ ռուսական զօրաբանակը, գործելով մինչև այժմ Արևելեան Պրուսիայում միայն իր աջ թևով կարողացաւ արշաւել, գրաւումներ անել, մօտենալ Կէօնիգսբերգին և աջողութիւններ ունենալ, ուրեմն որքան կը լինեն այդ աջողութիւնները, երբ այժմ նրա կենտրոնական և գլխաւոր ուժն ևս առաջ է շարժվում և արշաւում։

Այդ պատճառով, երբ այժմ ռուսական կենտրոնական զօրաբանակն ևս առաջ է շարժվել, պէտք է սպասել շուտով ռուս-գերմանական ռազմաբեմի վրա վճռական գործողութիւնների։

Գալով ծովային ռազմաբեմին, պարզ է, որ, շնորհիւ ճապոնական և անգլիական նաւատորմերի, Գերմանիայի յաղթական տիրապետութեան վճռական հարուած է հասցված։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
25—26 օգոստոսի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—(Պաշտօնական). Գերագոյն Զօրահրամանատարի շտաբից։ Օգոստոսի 23-ին գրաւված է Միկոլայեվ ուժեղ ամրութիւնը, որ ունէր շրջանային խրամատներ և շրջապատված էր երեք շրջան արհեստական խոչընդոտներով։ Վերցված է 40 թնդանօթ և մեծ պաշար։ Րավա-Ռուսկայի շրջանում շարունակվում են լուրջ ընդհարումներ։ Աւստրիական զօրքը, որը գործում էր Խօլմի ուղղութեամբ, ետ է մղվում մեր զօրքերից։ Մենք վերցրել ենք գերիներ, թնդանօթներ և ռազմամթերք։ Վերցված հիւանդանոցներից մէկում կային աւստրիացի 500 զինուորներ, որոնք հիւանդ էին փորհարինքով։ Այդ հիւանդութիւնը տարածված է թշնամու բանակում։ Գերմանական ճակատում թեթև ընդհարումներ են լինում։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն։ Օգոստոսի 24-ին մեր ձախ թևը ընդհարվեց թշնամու աջ թևի հետ նպաստաւոր պայմաններում, Գրանդ-Մորէնի ափերում։ Լօթարինգիայում և Վօգեզներում մեր կենտրոնի աջ թևի վրա կռիւը շարունակվում է։ Փոփոխութիւններ չը կան։ Երէկ Պարիզից դուրս եկած զօրքի և թշնամու աջ թևի միջև տեղի ունեցած կռիւը այսօր աւելի լայն չափերի է հասել։ Մենք շարժվեցինք մինչև Ուրկը ընդդիմադրութեան չը հանդիպելով։ Դաշնակից զօրքերի դրութիւնը ընդհանրապէս բարեյաջող է։

Մօբէժ բերդը շարունակում է հերոսաբար դիմադրել։

ԲՈՐԴՕ.—Մօտ օրերի ճակատամարտերից մէկում 137-դ հետևակ գնդի երկու զինուոր գրաւեցին գերմանացիների 28-րդ գնդի դրօշակը. գնդի գնդապետը գերի վերցվեց։ Այս գնդին շնորհված է Պատուաւոր Լէգիոնի շքանշան։

ԼՕՆԴՕՆ.—Օստէնդէից հեռագրում են, որ Տէրմօնդի շրջակաները հեղեղելու պատճառով, ջրում խեղդվել են շատ գերմանացիներ և կորել են շատ թնդանօթներ։ Գերմանացիները բարձրանում էին ծառերի կատարը և տների տանիքների վրա։ Տէրմօնդի մօտ եղած կռւում գերմանացիների կորուստը համնում է 5000 հոգու։

«Թայմսի» ասելով, Ժօֆֆրին աջողվել է անցնել գերմանական զօրքերի գիծը։ Իսկ անգլիացիները հարուածեցին թշնամու թևերին։ Գերմանացիները երէկ շտապով մաքրեցին Լիլը։

«Թայմսին» հեռագրում են Օստէնդէից, որ Վիլհելմ կայսրը չորեքշաբթի երեկոյեան գտնվում էր Բրիւսսէլում, «Բելվիւ» հիւրանոցում։ Նա գեներալ ֆօն-Լիւտվիցին նշանակեց Բելգիայի նահանգապետ։ Նոյն գիշերը գահաժառանգը Բրիւսսէլում, պալատի մէջ ճաշ տուեց։

ԲԱԼ.—Հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը և գլխաւոր շտաբը տեղափոխվել են Մեց։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ԲԵԼԳՐԱԴ.—Երէկ գիշեր, առաւ. ժամը 11-ից, Օբրէնովցի շրջակայքում լսվում էր ուժեղ թնդանօթաձգութիւն։ Լուրերի համաձայն, կռիւը նպաստաւոր է սերբ զօրքերի համար։ Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն։

Այս առաւօտ թշնամին ապարդիւն տեղը կրակում էր Բելգրադի մօտիկ վայրերի վրա։

ՀՌՈՄ.—«Մեսսաջերօյին» հաղորդում են Վենետիկից, որ չեռնոգորցիները զինուորական մինիստր Վուկոտիչի հրամանատարութեամբ Հերցեգովինայում ջարդել են աւստրիացիներին, վերցնելով նրանցից ռազմական և ուտեստի պաշարներ։ Աւստրիացիները պատերազմի դաշտում թողին բազմաթիւ սպանվածներ և վիրաւորներ։ Պայնիկ քաղաքի մօտ աւստրիացիները ետ մղվեցին և գեներալ Վուկօտիչը մտաւ քաղաք, որը մասամբ հրդեհված էր, մասամբ կողոպտված։ Արիւնահեղ կռիւը շարունակվում է։ Աւստրիական ուժեղ գնդերը ջանում են գրաւել Գրախովը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
25—26 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ.—Այստեղ շատ մեծ նշանակութիւն են տալիս Մեծ-Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև կապված համաձայնութեանը, որի ուժով ոչ մինը այդ պետութիւններից կազմելու չէ անջատ հաշտութիւն։ «Թայմսը» գտնում է, որ այդ համաձայնութիւնը իր ժամանակին կապվեց և պատասխան է Գերմանիայի այն ջանքերին, որոնք հետամուտ էին բաժանել Ֆրանսիային Ռուսաստանից և Անգլիայից և առաջարկել Ֆրանսիային հաշտութեան շահաւէտ պայմաններ։

ՊԱՐԻԶ.—«Eco de Paris»-ի ասելով Կահիրէի անգլիական զինուորական կոմենդանտը առաջարկեց Գերմանիայի և Աւստրիայի ներկայացուցիչներին, որոնք գտնվում են Խեդիվի մօտ, 24 ժամվայ ընթացքում թողնել Եգիպտոսը։

«Նիւ-Եօրկ Հերալդին» գրում են Պորտ Սայիդից, որ մարոնիտների պատրիարքը յայտնեց Բէյրութի ֆրանսիական ներկայացուցչին, որ 6000 մարոնիտներ պատրաստ են առաջին կոչից իսկ գնալ կռւելու ֆրանսիացիների շարքերում։

ՏՕԿԻՕ.—Ճապոնական զօրքը Շանդունում վճարում է առանձին բանկնօտներով, ինչպէս անում էր Մանջուրիայի կռւի ժամանակ։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Բեռլինից ստացված տեղեկութիւնների համաձայն, Գերմանիայում եղած օտար ձեռնարկութիւնները ենթարկված են իշխանութեան հսկողութեան այն պատճառով, որ նրանք վնաս չը բերեն երկրին և իրանց աշխատած գումարները չը փոխադրեն իրանց պետութիւններին։ Այդ հսկողութեան տակ են Բեռլինի անգլիական գազային գործարանը, Դրեզդենի Եամատցի ծխախոտի գործարանը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Շվէդական կառավարութիւնը արգելել է կռւող կողմերի նաւերին շվէդական ջրերում օգտվել անթել հեռագրի և հեռախօսի գործիքներով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բրիտանական կառավարութեան հաղորդագրութեան համաձայն, պատերազմի այս ամբողջ ամսվայ ընթացքում ծովերին տիրապետում են Անգլիան և դաշնակիցները։ Գերմանական և աւստրիական նաւատորմերի գլխաւոր ուժերը մնում են իրանց նաւահանգիստներում իրանց հրետանիների պաշտպանութեան տակ և ականներով շրջապատված։ Այս ժամանակի ընթացքում ջրասոյզ են արված գերմանական 5 յածանաւեր, 2 հականականաւեր, մի ջրասոյզ նաւ և աւստրիական մի յածանաւ։ Անգլիացիների կորուստը կայանում է նրանում, որ մի թեթև յածանաւ են կորցրել։

ԼՕՆԴՕՆ.—Եկան 250 ռուսներ, գլխաւորապէս հրէաներ. Նրանց տեղաւորել են Վէստմինիստէրի քաղաքային ապաստարանում։ Նախկին մինիստր Բէրնսը այցելեց ապաստարանը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնան ցանկութիւն է յայտնել, որ առանձին փնջեր-պահեստներ լինեն Կարմիր Խաչին բժշկական և ուտեստի մթերքներ մատակարարելու համար։ Կարմիր Խաչին իրաւունք է տրված պատերազմի ժամանակ պօստային առաքումները ձրիապէս կատարել։

ՄԻՆՍԿ. — Պատերազմի սկզբից ներքին նահանգները ուղարկվեցին այստեղով 209 օֆիցէր ու 11,620 զինուոր աւստրիացի և 8 օֆիցէր ու 462 զինուոր գերմանացի գերիներ։

ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
25—26 օգոստոսի

ՆԻՇ.—Կատարվեց հանդիսաւոր մաղթանք ռուսական յաղթութիւնների առիթով կառավարութեան բոլոր անդամների, դաշնակից տէրութիւնների դիւանագիտական ներկայացուցիչների, բարձրաստիճան պաշտօնեաների, ազգաբնակութեան աչքի ընկնող ներկայացուցիչների ներկայութեամբ։ Ազգաբնակութիւնը բուռն ցոյց կազմեց ռուսական միսսիայի շէնքի առաջ։

ՑԵՏԻՆԻԷ.—Թագաւորի, շքախմբի, դիւանագիտական մարմնի, զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների ներկայութեամբ կատարվեց հանդիսաւոր մաղթանք Լվօվը վերցնելու առիթով։ Ազգաբնակութիւնը բուռն ցոյց կազմեց ռուսական միսսիայի շէնքի առաջ։ Արտասանվեցին ճառեր։ Սերբ զօրքի պատգամաւորութիւնը եկաւ ռուսական միսսիան՝ շնորհաւորելու համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետ. Հեռ. Գործ. զանազան քաղաքներից ստացել է մի շարք հեռագիրներ Լվօվը և Գալիչը վերցնելու առիթով կատարված հանդիսաւոր մաղթանքների և հայրենասիրական ցոյցերի մասին։

ԶԱՆԱԶԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՀՌՈՄ.—Սովորական հանդիսաւոր կարգով Սիկստինեան տաճարում կայացաւ նոր պապի օծումը ներկայութեամբ կարդինալների, եպիսկոպոսների, դիւանագիտական մարմնի և Մալթիական Կարգի և Քրիստոսի գերեզմանի ներկայացուցիչների։

ԹԷՀՐԱՆ.—Ֆինանսական ճգնաժամը այնքան սուր կերպարանք է ստացել, որ կառավարութիւնը չի կարողանում հաւաքել նոյնիսկ մի փոքր գումար, որի շնորհիւ շվեդական գլխաւոր ինստրուկտորը կը համաձայնէր ժանդարմէրիան չարձակել։ Այդ պատճառով նա այսօր յայտարարեց կառավարութեանը ժանդարմէրիան արձակելու մասին և հրամայեց հետզհետէ հեռացնել պահակները գանձատնում և միսիաններում։

ՍՊԱՀԱՆ.—Բաբբիրուտ գաւառաշրջանը, որը գտնվում է Բախտիարիայում և պատկանում է Զիլլի Սուլթանին, աւերված ու թալանված է բախտիարների կողմից։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մոսկվայի մահմեդական կանանց մասնաժողովը սպիտակեղէն է պատրաստում հիւանդ և վիրաւոր զինուորականների համար։ Մզկիթներում հանգանակութիւն է տեղի ունենում։

◆ Գործող բանակից հաղորդում են, որ 200 վրացի-կամաւորներին թոյլատրված է գնալ առաջի դիրքերը («Касп.»)։

◆ Պարիզից հեռագրում են, որ անգլիական զօրքերը մեծ ջարդ են տուել գերմանացիներին։ Ձեռք է ձգված շատ թնդանօթ։ Գերմանական զօրքի կենտրոնը նահանջում է։

◆ Ռադկօ Դմիտրիեվը, որ, ինչպէս յայտնի է, մասնակցեց Լվօվի մեծ ճակատամարտին, գովասանքով է խօսել հրեայ զինուորների մասին։

◆ Անգլիացիք 25,000 զինուոր են ափ հանել Պորտ-Սաիդում։

◆ Գերմանական աղբիւրներից տեղեկացնում են, որ գերմանական զօրքերը գտնվում են ընդամենը 80 կիլօմետր հեռաւորութեան վրա Պարիզից։

◆ Վիէննայում կենտրոնանում են մեծ թւով զօրքեր։

◆ «Рус. Сл.»-ին հաղորդում են, որ Գերմանիային օգնութեան ուղարկված աւստրիական զօրքերը ետ են կանչվել։

◆ Վերջին տեղեկութիւններից երևաց, որ Եապօնիան 6-րդ զօրաբանակը զէնքի կանչելով ուղարկելու է Եւրոպա։ Սակայն Պետրօգրադի եապօնական դեսպանատունը այդ տեղեկութիւնները հերքեց։

◆ «Р. В.»-ին հեռագրում են, որ աւստրիական շատ գնդեր ոչնչացել են։

◆ Մոսկվայում կոմս Վիտտէն յայտնել է իր խօսակիցներին, որ ահեղ դէպքերը դեռ առաջիկայումն են։ Ի դէպ՝ կոմս Վիտտէն ստանալու է բարձր պատասխանատու պաշտօն։

◆ Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ իր չէզոքութիւնը պահպանելու համար Իտալիան պահանջում է Աւստրիայից յանձնել իրան Տրիէստը, Տրիենտը և Վալօնան, սպառնալով հակառակ դէպքում միանալ երեքակ համաձայնութեանը։

◆ Վերջին մի շարք պարտութիւններից յետոյ, ինչպէս ենթադրվում է, Աւստրիան առաջարկելու է հաշտութիւն կնքել։

◆ Իտալական մեծաքանակ գնդերը կենտրոնացել են աւստրիական սահմանում։

◆ Լուրերի համաձայն, Բրիւսսէլում ինչ-որ անյայտ մարդ մահափորձ է կատարել մինիստր-սօցիալիստ Վանդերվէլդէի դէմ, բայց ոճրագործին ձերբակալել են։

◆ Ֆրանսիական արտիլէրիան ահագին կորուստներ է հասցրել գերմանական զօրքերին։ Մաաս գետի մի քանի տեղերում ջուրը դուրս է եկել ափերից դիակների կոյտերի պատճառով։

◆ «Рѣчь»-ի ասելով, Շարլրուայի ահեղ ճակատամարտում ֆրանսիացիք և գերմանացիք կորցրին 240,000 մարդ համարեա հաւասար չափերով։

◆ Գրող Մաքսիմ Գորկին մեկնում է սանիտարի պաշտօնով պատերազմի դաշտը։

◆ Գերմանական զօրահրամանատարներ ֆօն Կլուկի, Բիւլօվի և Գիւզէնի զօրքերի արշաւանքները ֆրանսիացիք կանգնեցրին։

◆ Գերմանական աէրօպլաններից նորից 11 ռումբ նետեցին Պարիզի վրա. կան սպանվածներ և վիրաւորներ։

◆ Անգլօ-ֆրանսիական նաւատորմը Միջերկրական ծովում հալածեց գերմանական նաւատորմին, որ թաքնվեց իտալական նաւահանգիստներում։ Իտալական կառավարութիւնը պահանջեց գերմանական բոլոր ռազմանաւերին զինաթափ լինել։

◆ Բէլգիական զօրքը աջողութեամբ վանում է թշնամուն Գէնտից դէպի արևելք։

◆ Կահիրէի անգլիական հաւատարմատարը առաջարկել է Գերմանիայի և Աւստրիայի ներկայացուցիչներին անմիջապէս հեռանալ Եգիպտոսից։

◆ Ստօկհոլմի եապօնական դեսպանը հերքում է եապօնական զօրքերին Եւրոպա ուղարկելու լուրերը։

◆ Պարիզի և Իտալիայի կապը խզվել է։

◆ Լիէժում ուտելիքի պակասութիւն է։

◆ Յունաց նաւատորմը կանգնած է Մէտիլէնեայի մօտ։

◆ Գերմանացիք վերջնականապէս հեռացան Կալիշից և Ռադոմից։

◆ Նանսիի մօտերը տեղի ունեցած խոշոր կռւում գերմանացիք ահագին կորուստներ են ունեցել։

◆ Գերմանիան, ռուսաց զօրքերի առաջխաղաց արշաւանքներից յետոյ, վճռել է Արևելեան Պրուսիայում գործադրել պաշտպանողական տակտիկա։

◆ Լուրերի համաձայն, Բալտիկ ծովում ռուս-գերմանական նաւատորմների կռիւ է։

ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

«Рус. Сл.»-ի Պարիզի թղթակիցը առաջ է բերել միացեալ սօցիալիստների մանիֆէստի բովանդակութիւնը։ Այդ մանիֆէստը հրատարակվել է սօցիալիստներ Ժիւլ Գեդի և Մարսէլ Սամբի կաբինէտ մտնելու առիթով։

Ահա այդ մանիֆէստը.

«Գործը այժմ վերաբերում է ազգի ապագային, Ֆրանսիայի գոյութեան։ Կուսակցութիւնը չէր կարող այլ ևս տատանվել։ Մեր բանակը թէև յաղթված չէ թշնամուց, թէև բաժան-բաժան չէ արված, հարկադրված է նահանջել թշնամու գերազանց ոյժի առաջ։ Թշնամին այժմ սպառնում է մեր հայրենիքի ամենահարուստ, ամենաբերրի շրջաններից մէկին։

«Դեռ պատերազմի սկզբում ազգային միացման պայծառ ոգևորութիւնը ժողովրդի սրտին արիութիւն էր ներշնչում։ Այժմ անհրաժեշտ է, որ այդ միութիւնը հանդէս գայ իր ամբողջ ոյժով։

«Անհրաժեշտ է, որպէսզի ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնի պաշտպանելու իր հողը և ազատութիւնը, ոտքի կանգնի, մղված այն հերոսական ոգևորութիւններից մէկով, որոնք անփոփոխ կրկնվել են մեր պատմութեան մէջ, ներկայիս նման ծանր օրերին։

«Կառավարութեան գլխաւորը կարծում է, որ նրա համար, որպէսզի ոտքի կանգնեցնի ողջ ժողովուրդը, կազմակերպի և պահպանի նրա ոգին գալիք կատաղի կռիւների հանդէպ, նրան անհրաժեշտ է ընդհանուր միահամուռ գործակցութիւն և գուցէ առանձնապէս գործակցութիւնը նրանց, որոնք կռւում են պրօլետարիատը դեսպոտիզմի ծանր լծից ազատելու համար։ Կառավարութեան գլխաւորը չէր կարող չիմանալ, որ երկրի համար ծանր տարիներին, ինչպէս 1793 թ., նոյնպէս և 1870 թ., ժողովուրդը իր յոյսերը դնում էր, իր կամքը յանձնում էր հէնց այդ մարդկանց, հէնց այդ սօցիալիստների, այդ յեղափոխականների վրա. և ահա կառավարութեան գլխաւորը մի հրաւէրով դիմեց մեր կուսակցութեան, և մեր կուսակցութիւնը արձագանք տուեց այդ հրաւէրին։

«Ահա իմաստը և նշանակութիւնը այն փաստի, որ մեր բարեկամները մտնում են կառավարութեան կազմի մէջ։

«Նրանք մտնում են դրա մէջ այն գործի դժուարութեան և կարևորութեան պարզ գիտակցութեամբ, որը պէտք է կատարեն նրանք, և ամենից առաջ կը հասնեն դրան, որպէսզի երկիրը իմանայ ողջ ճշմարտութիւնը։ Նրանք ժողովրդի սրտին կը ներշնչեն նոր արիութիւն, յաղթանակի նոր եռանդ, կը ներշնչեն լիակատար հաւատ դէպի կառավարութեան անկեղծութիւնը, երկրի պաշտպանութեան համար նրանք ոտքի կը կանգնեցնեն ամբողջ ժողովուրդը»։

ԳՈՒՍՏԱՒ ԷՐՎԷԻ ՆԱՄԱԿԸ

Յայտնի հակամիլիտարիստ Գուստաւ Էրվէն, որ հիմա թունդ հայրենասէր է դարձել, իր «La Guerre Sociale» թերթում, մօրը դիմելով, հետևեալն է գրում.

«Դու վկայ ես եղել երկու պատերազմի և զօրքերը այդ պատերազմները ուղարկելուն, և հիմա ասա, արդեօք նրանց և ներկայ պատերազմի ու զինւորների միջև ընդհանուր որևէ բան կա՞յ։

«Երբ մենք դեռ երեխայ էինք, քանի անգամ դու նկարագրել ես, թէ որքան ցաւալի և տխրալի էր 1870 թ. զօրքերը կռւի ուղարկելը, թէ ինչպէս նախազգացումից կծկվում էին մարդկանց սրտերը, թէ ինչպէս այն պարուչիկը, որ քո հարևան տանն էր ապրում, հրաժեշտ տալու ժամանակ ասաց՝ «Ես գիտեմ, որ չեմ վերադառնալու»։

«Ի՜նչ տարբերութիւն նրա և ներկայիս միջև։ Ի՜նչ ոգևորութիւն, ի՜նչ խանդավառութիւն և ի՜նչ հաւատ կայ այժմ դէպի վերջնական աջողութիւնը։ Որպիսի՜ միութիւն։

«Անգամ 1872 թ. նման բան չի եղել։ Այն ժամանակ կային Վանդէան, քահանաները, արքայականները, որոնք չէին ցանկանում թշնամու դէմ ելնել։ Այս անգամ թշնամու դէմ են գնում ամենքը՝ արքայականները, բօնապարտիստները, ազգայնականները, և այնպիսի կատաղութեամբ առ թշնամին, ինչպէս և մենք, «հայրենիք չունեցողներս»։

«Դու չես կարող երևակայել, թէ ազգային միութիւնը ինչ աստիճանի կարող է հասնել»։

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Էնվէր-փաշան պառկած է անկողնում։ Մարմնից դեռ գնդակը չեն հանել։

◆ Կ. Պօլսում խուժանը սպառնում է ջարդել քրիստոնեաներին։

◆ Կ. Պօլսում մասսայական ձերբակալութիւններ են կատարվում «Մ. և Ա.» կոմիտէի շրջաններում, որոնք համաձայն չեն Էնվէր-փաշայի քաղաքականութեանը։

◆ Լուրերի համաձայն, սուլթանը մտադիր է հրաժարվել գահից յօգուտ իր որդու։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ ականներ են դրված Բօսֆորի և Կ. Պօլսի միջև ընկած ճանապարհում։ Քաղաքում տեղի են ունենում ցոյցեր։ Սուլթանի մօտ կայացաւ խորհրդակցութիւն շէյխ-իւլ-իսլամի մասնակցութեամբ։ Պալատի մօտի փողոցները պաշտպանվում են զօրքերով։ Տրամադրութիւնը քաղաքում յուզալի է։ Եւրօպացիք մեկնում են շտապով։

◆ Սիրիայի զօրքերը յայտնել են, թէ չեն կամենում պաշտպանել Փոքր-Ասիայի ծովափը։ Նրանք պահանջում են, որպէսզի նրանց նշանակեն միայն Սիրիայի պաշտպանութեան համար։

◆ Պետերբուրգի մահմեդականները Կ. Պօլիս բողոք ուղարկեցին Թիւրքիայի թշնամական քայլերի վերաբերմամբ, որոնք ուղղված են երեքակ համաձայնութեան դէմ։

◆ Լուրերի համաձայն, սուլթանը հիւանդացել է հոգեկան հիւանդութեամբ։

◆ Թիւրքերը տենդային շտապ գործողութիւններով ամրացնում են ասիական ափը։

◆ Անգլիան արգելեց խըդիվին վերադառնալ Եգիպտոս Կ. Պօլսից, սպառնալով այլապէս գահընկէց անել։

◆ Պետրօգրադից յայտնում են, որ մեր արտաքին գործերի մինիստրութիւնը հանգիստ է նայում թիւրքական դէպքերին։ Երրեակ համաձայնութիւնը ոչ մի պահանջ չէ ներկայացրել Թիւրքիային, քաջ գիտենալով որ բոլոր «թիւրքական ռազմի ընդարձակ պատրաստութիւնները» լոկ խաղեր են և մանեօվր ըստ թիւրքականի։

◆ Թիւրքական աէրօպլանները թռիչքներ են կատարում յունաց կղզիների վրա, ահ ու սարսափ տարածելով յոյն ազգաբնակութեան մէջ։

◆ Թիւրքիա մթերքների ներմուծումը արգելված է։ Ազգաբնակութիւնից ուտելիք գրաւելու մասին խօսք լինել չէ կարող, որովհետև ազգաբնակութիւնը ինքն էլ է քաղցած։ Սպասվում է սով։ Թիւրք զօրքերի մէջ տիրում է մեծ դժգոհութիւն սննդի պատճառով։

◆ Կ. Պօլսում յամառ լուրեր են պտտվում, թէ գեներալ Սանդէրսը, որ նորերս վերադարձաւ Էրզրումից, մինիստրների խորհրդի նիստում սպառնացել է, որ կը ռմբակոծէ Կ. Պօլիսը «Գեբէն» «Բրէսլաու» զրահանաւերից, եթէ Թիւրքիան համաձայնէ զինաթափ լինել։

ԹՌՈՒՑԻԿ ՄՏՔԵՐ

X

Ֆրանսիական երկիրը ներս խուժած գերմանական զօրքի աջ թևը, որ բաղկացած է 350,000 զինուորից, հեշտութեամբ առաջ է խաղում, որովհետև Ֆրանսիան իր սահմանի այդ մասում չէր կառուցանում առաջնակարգ բերդեր և ամրութիւններ Բէլգիայի դէմ, քանի որ այդ պետութեան չէզոքութիւնը ապահովված էր առանձին պայմանագրով չորս մեծ պետութիւնների կողմից, որոնց թւում նաև Գերմանիան։

Եղած բերդերն ու ամրութիւններն էլ հին տեսակի են և ոչ առաջնակարգ նշանակութիւն ունեցող։

Միւս կողմից գեներալ Ժոֆֆրը նահանջելով ճանապարհ է բանում թշնամուն դէպի Պարիզ։

Ներկայումս տեղի է ունենում երկու ահեղ՝ ֆրանսիական և գերմանական զօրաբանակների ղեկավարների պատերազմական ծրագրի գործադրման մրցութիւն։ Հետևանքը լինելու է ճակատագրական՝ պատերազմող կողմերից մէկն ու մէկի համար։

Ֆրանսիական հրամանատարը նահանջում է հարաւ իր ձախ թևով, որպէսզի գերմանական զօրքի աջ թևը ստիպված լինի իր զօրքի մի մասը ուղղելու Պարիզի դէմ։ Այդ դէպքում թշնամու զօրքը երկարութեամբ ձգվելով թուլանալու է կենտրոնում և Ժոֆֆրը դիմելու է յարձակման ճեղքելու կենտրոնը, որ եթէ աջողվի, իսկապէս գերմանական զօրքի համար պարտութիւնը անխուսափելի է։ Սակայն գուցէ այս դէպքում էլ թշնամուն աջողվի մեծ զօրք կենտրոնացնել պահանջվող վայրում՝ կենտրոնում։ Բոլոր նշաններից երևում է, որ այժմ Գերմանիան էլ հնարաւորութիւն չունի արևմտեան սահմանի վրա նոր զօրամասեր ուղարկելու։ Արևելեան սահմանը ստիպում է նրան զօրքեր հանելու Ռուսաստանի զօրքերի առաջխաղացման դէմ, Աւստրիայի պարտութիւնը աւելի ևս վտանգաւոր դարձրեց արևելեան սահմանը և, որ ամենից կարևորն է, Գերմանիան իր զինուորական ամբողջ ոյժը հանել է պատերազմի դաշտը, պահեստում ոչինչ չունի, գործող զօրամասերն ևս, խոշոր կորուստներ կրելով, շարունակաբար հալվում են։

Այս պայմանները մեծապէս նպաստում են այն ռազմական մեթօդին, որին ներկայումս հետևում է գեներալ Ժոֆֆրը։

Գերմանական զօրքը հիւսիսից առաջ շարժվելով նպատակ ունի նախ զօրքի մի մասով Պարիզի դէմ կանգնել և պաշարման մէջ պահել մայրաքաղաքի ամրութիւնները, միւս մասով շրջապատել գեներալ Ժոֆֆրի ձախ թևը և ետ մղել դէպի արևելեան սահմանը։ Այս ծրագրի աջողման համար գերմանական զօրքը մեծ յոյս է դնում իր դաշտային ծանր թնդանօթների վրա և, որ ամենից գլխաւորն է, Լիւկսէմբուրգի, Լօրէնի և Էլզասի սահմաններում գտնվող զօրքերի աջող առաջխաղացման վրա։ Այս դէպքում Ժոֆֆրի զօրամասերը ամեն կողմից շրջապատված կը լինեն թշնամու զօրքերով մի շարք ամրութիւնների շատ նեղ տարածութեան մէջ, որի հետևանքը լինելու է կործանարար։ Այս նպատակով էլ արդէն գերմանական զօրքերը կատաղի յարձակումներ են մղում հարաւային վերջին կէտից սկսած մինչև հիւսիսային վերջին ամրութիւնները՝ Բէլֆօրից մինչև Մօբէժ։

Ֆրանսիական զօրքերն ևս, յենվելով մի շարք բերդերի և ամրութիւնների վրա, կատաղի կերպով ետ են մղում թշնամու յարձակումները, շատ լաւ գիտակցելով որ ներկայումս միայն իրանց է վիճակված վճռական դեր կատարել հրամանատար Ժոֆֆրի ծրագրի աջող իրագործման համար։

Մօտիկ ապագան, գուցէ և այս օրերը ցոյց կը տան, թէ պատերազմող կողմերից ումն է աջողվելու դուրս գալ յաղթող։

Ներկայումս երկու զինուորական խոշոր ազգութիւններ վերջին ճիգն են թափում, լարում վերջին ոյժերը, որպէսզի առաջիկայ վճռական և հսկայական ճակատամարտի մէջ յաղթող հանդիսանան։ Մինչև իսկ Պարիզի գրաւումը չէ վճռելու պատերազմի բաղդը։

Այլ միմիայն ու միմիայն կռւող կողմերից մէկն ու մէկի զօրքերի ընկճումը, որ տեղի կունենայ պատմական Շալօնի դաշտավայրերից սկսած մինչև Վօգէզներն ու Էլզասը միաժամանակ առաջիկայում բռնկվելիք չը տեսնված ու չը լսված ճակատամարտերի մէջ։ Երևի մենք շատ շուտ վկայ կը լինենք մի այնպիսի պատմական դրամայի, որի նմանը դեռ չէ եղել։

Ահա թէ ինչ է պատկերացնում ներկայումս արևմտեան թատերաբեմը մի ամսից աւել տևող պատերազմական գործողութիւններից յետոյ։

Այժմ անցնենք արևելեան սահմանին՝ արևելեան թատերաբեմին։

Ա. Նազարեթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՓՐԿԱՐԱՐ ՈԳԻՆ

> Նոյնիսկ և այն ժամանակ, երբ մարդկանց վրա թափվում են մեծագոյն աղէտներ, երբ ամբողջ երկիրներ ամայանում են պատերազմներից, երբ բնակիչները սովամահ են լինում քաղցից... փոխադարձ օգնութիւնը շարունակում է գոյութիւն ունենալ գիւղի և քաղաքի աղքատ ազգաբնակութեան մէջ։
>
> «Взаимная помощь» П. Кр.

Գոյութեան կռւի մի ուրիշ գործօն խոշոր նշանակութիւն ունի հասարակական կեանքում. դա փոխադարձ օգնութեան բնազդային հակումն է, որ մարդկային մտաւոր ու տնտեսական զարգացման պատմական պերիօդներում միշտ փոխվում է գիտակցական և կազմակերպված երևոյթի։

Այս փրկարար ու ստեղծագործող միտքը շատ խոր և շատ հին ծագում ունի. աւելի զօրեղ թափով արտայայտվել է մանաւանդ այն ժամանակ, երբ մայր երկրին սպառնացել են համակործան չարիքները, երբ համախմբված կուլտուրական միութիւններ ստիպված են կանգ առնել մի մահաբեր, քաղաքակրթական հոյակապ կառուցուածքը վտանգող և համաշխարհային կեանքը թունաւորող զուլումի առաջ։

«Փոխադարձ օգնութեան կենսարար գաղափարը,—գրում է նշանաւոր ռուս հասարակագէտ П. К.-ն,—այնքան խճճված է մարդկային ցեղի անցեալ էվօլիւցիայի հետ, որ չը նայած պատմութեան յեղաշրջումներին՝ մարդիկ մինչև օրս նրան ամենայն խնամքով պահել պահպանել են»։

Այս բնազդային մեծ հակումն ունի բազմազան ձևեր ու արտայայտութիւններ. հասարակական փոթորկաբեր կեանքի ելևէջներում կրում է տարբեր բնոյթ և առանձնագիր նպատակ։

Փոխադարձ օգնութեան սկզբունքը ձևակերպվել ու գիտակցական ոգի է ստացել սկսած տոհմական հասարակակարգից, աստիճանաբար տարածվելով և խորանալով ցրել է կուլտուրական հանրօգուտ սերմեր և զարգացրել է քաղաքակրթական ծիլեր, ստեղծելով նրանց համար ապրելու ու աճելու յարմար միջավայր. ներկայումս դառել է ժամանակակից հասարակութեան առաջադէմ պրօգրեսի ու փառաւոր կուլտուրայի գոյութեան հիմնական սիւնը։

«Միայն մասսայական կոտորածների ժամանակ, երբ ոչնչանում են տասնեակ հազարաւոր մարդիկ, կարելի է լինում ետ կասեցնել այդ համատարած ժողովրդական կենսաբեր հոսանքը, և միայն հրի, սրի և անլուր նախճիրների սարսափից՝ խեղդամահ է արվում այդ փրկարար շարժումը»։ («Взаимная пом.» ст. 289)։

Համաշխարհային մեծ երկունքի սոսկալի գալարումների ժամանակ, փոխադարձ օգնութեան տարրային հակումն աւելի քան կարիք ունի գիտակցական ու կազմակերպված լինելու և հսկայ զանգուածի գոյութեան պատուանդանն ու փրկութեան խարիսխը դառնալու։

Ահա ինչու հասարակական գործիչն, եթէ ցանկանում է օգտակար լինել մայր երկրին, պարտաւոր է ամեն կերպ նպաստել, որ դարաւոր սկզբունքի տեսական մասը գործնականի փոխվի, որ վերացական իդէալները կեանքի հասունացած պահանջներին յարմարեցվեն։

Մեր գիւղացիական աշխարհը ներկայումս ամայացել է իր թարմ ու ակտիվ ոյժերից։ Բնական տնտեսութիւնը թողած երեսն ի վայր, աշխատաւոր ձեռքերի խոշոր բանակը զբաղված է այժմ իր քաղաքացիական ամենանուիրական և անհրաժեշտ միսիայով՝ հայրենիքի քաղաքակրթութիւնն ու կուլտուրան պաշտպանել համակործան վանդալիզմից։

Մեր լայնածաւալ երկրի բազմատեսակ գիւղատնտեսական բարիքներով անչափ առատ ընդարձակ դաշտեր և գեղեցկանկար ու արգաւանդ ագարակներ մատնվել են բացարձակ անտէրութեան։

Բազմահոգ գիւղացու արիւն-քրտինքով մշակած ու ցանած, ջրած ու խնամած աշնանացան բերքի արտը վաղուց է հասել, դեղնել ու չորացել, կախուել ու կծղել զեփիւռից խշշում։

Ներկայ փոթորկաբեր մոմենտում ո՞ր մտայոյզ անցորդն ուշադրութիւն կը դարձնի մայր հողի աղեկտուր մորմոքին, պատերազմական թատերաբեմ շտապող ո՞ր գիւղացի զինուորը ժամանակ ունի լսելու իր սիրասուն արտի հոգետանջ հեկեկանքը...

Երևանի լայնածաւալ նահանգում բազմաթիւ օրինակելի տնտեսութիւններ և գիւղական խոշոր ձեռնարկութիւններ ենթարկված են անտէրութեան ու քայքայման։ Տեսել եմ շատ ագարակներ, որոնց կամ քաղհանն է կիսատ կամ ջուրն է պակաս, կամ առատ բերքն է փչացել և կամ ծառերի հասած պտուղներն են անխնամ թափթփվել... Մի կողմից տիրում է բանւորական ազատ ձեռքերի կատարեալ սով, իսկ միւս կողմից դաշտային անհատնելի աշխատանք...

Հէնց միմիայն հացահատիկների համար մշակված տարածութիւնը հասնում է ամբողջ նահանգում 263,952 դեսեատինի։ Սովորական տարիներում գիւղատնտեսական այդ ահագին աշխատանքը հնարաւոր է վերջացնել հազիւ-հազ 1—$1^1/_2$ ամսվայ ընթացքում։

Գիւղական աշխարհի արդիւնաբերող միակ մօտօրը դարձեալ հանդիսանում է համայնքը, որը զգալով վտանգի ծանր հետևանքները՝ դաշտ է հանել աշխատանքի ընդունակ բոլոր իր անդամներին՝ առանց սեռի ու հասակի խտրութեան՝ և գերբնական ճիգ է թափում առատ բերքն ազատել փչանալուց ու [illegible] տալուց։

Փոխադարձ օգնութեան որպէս կենդանի օրգան բնականօրէն պէտք է ծառայի գիւղական համայնքը, որին կարծես պատմական անցեալից աւանդաբար վիճակվել է ժողովրդական մեծ-աղէտների ժամանակ հանդէս գալ կատարելու իր անփոխարինելի փրկարար դերը։

Աւելի քան այժմ գիւղական կեանքում պէտք է պատուաստվի ու կենդանի գործի մէջ մարմնանայ «մէկն ամենքի համար, ամենքը՝ մէկի» ազատարար նշանաբանը։

Եթէ կուլտուրայի և քաղաքակրթութեան հիմնաւորման խաղաղ օրերին փոխադարձ օգնութեան կենսաբեր ոգին հրաշքներ էր կատարում գիւղական առաջադէմ համայնքների մէջ. եթէ լեռնաշխարհ Շվէյցարիայով անցնող օտար անցորդն ուղղակի հիացմունքով է խօսում նրա հարթ ուղիների, տեղական ազնուացեղ անասունի, գիւղատնտեսական զարգացած ճիւղերի, կրթական-կուլտուրական բազմապիսի հիմնարկութիւնների և ժողովրդի բարեկեցիկ վիճակի մասին, չը պէտք է մոռանալ մի բան, որ այդ ամենը ստեղծվել է դարերի ընթացքում գիւղացիութեան համար միս ու արիւն դառած փոխադարձ օգնութեան փրկարար ոգու շնորհիւ։

Ժողովրդական նոյն անտրոհելի գաղափարը, ներկայ համաշխարհային պատերազմի ժամանակ, պէտք է ստեղծի մեր քաղաքակրթական բարեկեցիկ կեանքի համար այնպիսի դժուարամերձ ամրապարիսպներ, որոնց վրայով անհնար լինի ներս խուժել ժամանակակից բարբարոսութեան մահաբեր հոսանքը։

Երկրի վերածնվող կուլտուրայի ջերմ երկրպագու դեմօկրատ ինտելիգենցիան պարտաւոր է աւելի ամուր տարածել մեր գիւղացիութեան լայն շերտերում միացեալ օգնութեան անվկանդ ոգին, որով կը կզլխանայ ներկայ անցողական ծանր մոմենտի կործանարար արհաւիրքները։

Համամարդկային խելակորոյս պայքարի ժամանակ ամեն կերպ հարկաւոր է աշխատել, որ խաղաղ մասսայի շինարար կեանքի փրկարար կայծերն անմիջապէս բորբոքվեն հսկայ խարոյկների փոխվեն։ Այս ամենից յետոյ նոր միայն կարելի է հաւատալ, որ անողորմ Մօլոխը չէ կարող ոչնչութեան մատնել բազմաչարչար ժողովրդի դարերով ստեղծած բարեկեցիկ կեանքի և փառաւոր կուլտուրայի անմահ կոթողները։

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ԿՈՉ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ

Այս նշանաւոր, պատմական մոմենտին, երբ պահանջւում է երկրի ոյժերի ծայրայեղ լարումն, երբ մեր եղբայրները արիւն են թափում, իրանց կեանքն են զոհում, երբ պարտականութեան զգացմունքը մոռացնել է տալիս բոլոր ներքին հաշիւները, միացրել է երկրի բոլոր ազգութիւնները, ի մի է ձուլել բոլոր կուսակցութիւնները, այսպիսի նշանաւոր մոմենտին, մեր՝ հայուհիներիս կողմից յանցագործութիւն կը լինէր ապրել միմիայն անձնական շահերով։

Ամեն մի քաղաքացի, կին թէ տղամարդ, պարտաւոր է իր լուման ձգել, պարտաւոր է մասնակցել այդ մեծ, զոհեր պահանջող դրութեանը։ Բաւական չէ մի քանի կոպէկներ տալ յօգուտ զինուորների ընտանիքների, կամ վիրաւորվածների. անհրաժեշտ է աւելի մօտ, աւելի լայն մասնակցութիւն։

Հայուհիք, մեր եղբայրները գնացին արիւն թափելու. դրանից աւելի մեծ զոհաբերութիւն անել անկարելի է։ Նրանց որբացած երկիրը, նրանց ընտանիքները, նրանց դաշտերն ու այգիները մնացին մեր խնամքին, մեր հոգատարութեանը կարօտ։

Մեզ վրա վսեմ պարտականութիւն է դրվում՝ կատարել մեր պարտքը հայրենիքի առաջ. մեզանից մեծ զոհաբերութիւն է պահանջվում։

Այս նշանաւոր, կրիտիկական մոմենտին, մենք իրաւունք չունենք հանգիստ նստելու. դա յանցագործութիւն, անբարոյականութիւն կը լինէր։

Սթափվեցէք, հայուհիք, ոտքի կանգնեցէք, ցոյց տուէք, որ ձեր մէջ կայ սիրոյ գաղափարական ոգի, որ դուք ընդունակ էք անձնուիրութեան։

Յանուն գաղափարի, յանուն հայրենիքի սիրոյ դիմում եմ ձեզ, հայուհիք. կատարեցէք ձեր պարտքը հայրենիքի առաջ։

Թողէք ձեր անձնական շահերը, ոտքի կանգնեցէք, գնացէք գործելու ընդհանուրի համար։

Հասարակական ասպարէզը ձեզ է մնացել. ձեզանից սպասվում է անձնամոռացութիւն։

Եթէ մենք կանայքս պահանջում ենք իրաւունքների հաւասարութիւն, մենք պէտք է և հաւասար պարտականութիւններ կրենք։

Պարտականութիւններից ամենածանրը և ամենավսեմը—զոհել կեանքը հայրենիքի համար—բաժին է ընկել տղամարդկանց. մեզ վրա մնում է աւելի թեթեւ, բայց պատւաւոր պարտականութիւն՝ թև ու թիկունք լինել նրանց երկրի ներսում։

Մեր առաջ ահագին գործ կայ կատարելու. պէտք է խնամել վիրաւորվածներին, պէտք է օգնել զէնքի կանչվածների ընտանիքներին, պէտք է հաւաքել նրանց կալն ու արտը, նրանց բոստանն ու բաղը. պէտք է գնալ գիւղ՝ այնտեղ անձամբ գործելու։

Երկիրը ձեզ է սպասում։

Վեր կացէք, հայուհիք, կազմակերպվեցէք, գործի կանգնեցէք։

Աւելի մեծ կարիք, գործող ոյժերի աւելի մեծ պահանջ հազիւ թէ երբևիցէ լինի։

Երկիրը ձեզ է դիմում, կանայք, օգնեցէք։

Եթէ ձեր մէջ կայ ինքնագիտակցութիւն, եթէ ձեզ խորթ չէ հայրենիքի սիրոյ գաղափարը, եթէ դուք ընդունակ էք սիրել ժողովուրդը, սիրել հայրենիքը, եթէ ձեր մէջ կայ գաղափարականութիւն, դուք անտարբեր մնալ չէք կարող. դուք ոտի կը կանգնէք, կը գնաք, կը ցրվէք, կը մտնէք հիւանդանոցները, կը գնաք գիւղերը, կը մտնէք ժողովրդի մէջ անմիջապէս նրանց օգնութեան գործը կազմակերպելու, նրանց արտասուքը սրբելու։

Ես ականատես եմ եղել, թէ ինչպէս ռուս գաղափարական կինը օգնութեան է հասել իր ժողովրդին՝ համաճարակի, սովի, հրդեհների ժամանակ. գնացել է գիւղը, ժողովրդի մէջ գործել, անձնուիրութեան, հերոսութեան օրինակներ տուել։

Ներկայ աղէտը անհամեմատ մեծ է, ահարկու, սոսկալի. մարդկութեան պատմութեան մէջ շատ չեն պատահել այդպիսի դէպքեր. ներկայ մոմենտը ոյժերի արտակարգ լարումն է պահանջում։ Միևնոյն ժամանակ այդ վիթխարի, դրամատիկական դրութիւնը մի փորձաքար է մեր քաղաքացիական հասունութեան, մեր գաղափարականութեան, մեր սիրելու ընդունակութեան համար։

Կինը մեծ ոյժ է, իսկ սիրող, գաղափարական կինը՝ մի հսկայ, մի հզօր ոյժ։

Կինը, մարդկութեան կէսը, չէ կարող անտարբեր մնալ, երբ մարդկութեան միւս կէսը ոտքի է կանգնել, նետվել համաշխարհային ահեղ կռւի մէջ։

Հայուհիք, դուք էլ չէք կարող անտարբեր մնալ, դուք իրաւունք չունիք հանգիստ նստելու այս մեծ, պատմական րոպէին. չէ, դուք իրաւունք չունէք. դա յանցագործութիւն, մեծ անբարոյականութիւն կը լինէր։

Եթէ դուք չը սթափվիք, ոտքի չը կանգնէք ինչպէս մի հոգի—ապագայ սերունդները նախատինքով կը յիշեն ձեզ։

Չէ, մենք չը պէտք է արժանանանք անարգանքի. թող ապագայ պատմաբանը յարգանքով խոնարհվի ներկայ պատմական շրջանի հայ կնոջ առաջ, ինչպէս որ մենք այժմ յարգանքով ենք յիշում V դարի հայ կանանց, որ զոհվել են յանուն գաղափարի, յանուն քրիստոնէութեան։

Հայուհիք, եթէ դուք անընդունակ էք անձնուիրութեան մի այսպիսի խոշոր վիթխարի, պատմական րոպէին, ուրեմն դուք քաղաքացիապէս մեռած էք. եթէ դուք ընդունակ չէք ոգևորվելու մարդկութեան ամենավսեմ գաղափարներով, ուրեմն դուք իրաւունք չունէք կին կոչվելու այդ բառի բարձր մտքով։

Հայուհիք, արձագանք տուէք, ոտքի կանգնեցէք։

Երկիրը ձեզ է սպասում։

Այժմ, կամ երբե՛ք։

Սոֆիա Դանիէլ-Բէկ

ՌՈՒՄԸ ՀԱՒԱՏԱՆՔ

Որ Թիւրքիան ներկայ համաեւրոպական պատերազմի հէնց սկզբից երկդիմի և կասկածելի ուղղութիւն բռնեց, դա մի այնպիսի անհերքելի փաստ է, որ եթէ դրա մասին մարդիկ լռեն, քարերը լեզու կառնեն և կաղաղակեն։

Թիւրքիայի ռազմասիրական ձգտումների և պատրաստութիւնների մասին օր չի անցնում, որ ռուսական, հայկական և եւրոպական թերթերը մի նորութիւն չը յայտնեն։

Ինչպէս յայտնի է ընթերցողներին, վերջերս «Մշակի» Երզրումի թղթակիցը մի շարք յօդուածներում նկարագրում է Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնները։

Ի հարկէ այդ թղթակցութիւնների մէջ մեծ մասամբ արտայայտվում էր այն, ինչ որ ռուս լրագիրներն էին արտայայտում։

Բայց ահա, սիրելի ընթերցող, որ այդ թղթակցութիւնները դուր չեն եկել «Зак. Рѣчь» թերթին, որն ստանձնելով Իթթիհադի պաշտօնական օրգանի դերը՝ իր № 186-ում Է. Ս.-ի (Էյնալլի-բէկ Սուլթանով) բերանով զարմանք է յայտնում հայ թերթերի Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների առիթով գրածների մասին և այդ տեղեկութիւններին դիտաւորեալ նպատակ է վերագրում։

Սակայն, «Зак. Рѣчь»-ի խմբագրութիւնը զետեղել է միևնոյն համարում «Въ Турціи передъ войной» վերնագրով մի յօդուած, ուր առաջ է բերել «Утро Юга» թերթից մի ընդարձակ քաղուածք Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների մասին, որով հերքվում է Սուլթանովի գրածը։

Էյնալլի-բէկ Սուլթանովին մենք ճանաչում ենք նրա Երևանում գտնված ժամանակից, ուր նա բոլոր հայերին պատկառանք էր ներշնչում իր ազատամիտ հայեացքներով, որի համար և նա 1905 թւին ստիպված եղաւ հեռանալ Երևանից և ազատվել իր ազգակիցների հալածանքներից։

Բայց, ինչպէս երևում է, այդ ժամանակից մինչև այժմ կամուրջի տակով շատ ջուր է անցել, իթթիհադական հովերը նրա գլխովն էլ են փչել և «վերածնել են» նրան՝ նետելով «Зак. Рѣчь»-ի գիրկը։

Սրտանց ցաւում ենք այդ տեսակ վերածնութեան համար։ Ե. Վ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մաղթանքներ ռուս զէնքի յաղթութեան համար

Մանգլիս, 24 օգոստոսի

Մեր ամարանոցների մէջ, կարելի է ասել, ամենագեղեցիկը և ամենահաճելին Մանգլիսն է։ Այս տարի, չը նայելով որ եկւորներ քիչ կային, բայց շնորհիւ զօրքի, մեծ կենդանութիւն և աշխոյժ կեանք էր տիրում։ Ամբողջ օրը զինուորական երաժշտութիւնը թնդում էր. ամեն մի հանդէսի ժամանակ ռուսական, ֆրանսիական և անգլիական օրհներգները նուագվում և երգվում էին, օֆիցերները և զինուորները ուրախ-ուրախ պլտտում էին և ոգևորութիւն ներշնչում ամբողջ ժողովրդին։

Կատարվեցին հանդիսաւոր մաղթանքներ զինուորական մեծ հրապարակի վրա. առաջ մաղթանք կատարեց օրթոդոքս հոգևորականութիւնը, և երևանեան փառապանծ գնդի պետը՝ գնդապետ Մդիվանին մի ոգևորիչ ճառ խօսեց զօրքին։ Յաջորդ կիրակի օրը հանդէս և մաղթանք կատարեցին հայերը։ Առաջ հայոց եկեղեցում տեղական տէր-Անդրէաս քահանան մատուցեց պատարագ, որին ներկայ էին մօտ 1000 հայ զինուորներ և նորակոչներ, գնդապետ Մդիվանին, շատ օֆիցերներ և ամբողջ հայ գաղութը. 500 զինուոր հաղորդութիւն ընդունեց. ապա այդ զինուորներին բաժանվեց մատաղ, որ պատրաստել էին հայերը։ Դրանից յետոյ եկեղեցական թափօրով և զինուորական երաժշտութեան նուագածութեամբ ամենքը գնացին զինուորական հրապարակը, ռուսաց եկեղեցու առաջ, և տէր-Անդրէասը, Շիոյեան Սարգիս աւ. քահանայի հետ կատարեց մաղթանք ու խօսեց հայերէն մի քարոզ, ոգևորելով հայ զինուորներին, յորդորելով նրանց չը խնայել իրանց կեանքը հայրենիքի պաշտպանութեան և փառքի համար և ապա դիմելով գնդապետ Մդիվանիին, օրհնեց նրան և ամբողջ զօրքը։ Քահանայի ճառից յետոյ խօսեց և պ. Լ. Տիգրանեանը, նոյնպէս ոգևորելով զինուորներին և բացատրելով ներկայ պատերազմի նշանակութիւնը։

Հանդէսը դուրս եկաւ շքեղ և փառաւոր։

Յաջորդ անգամ մաղթանք կատարեց նոյն հրապարակի վրա հրէական հասարակութիւնը։

Ամսիս 1-ին, Աստուածածնի տօնի օրը, երբ օրհնում էին հայոց եկեղեցում խաղողը, տ. Ռօզալիա Շահպարոնեան՝ մատաղ պատրաստելով կերակրեց 50 հայ, ռուս և վրացի զինուորների։ Պէտք էր տեսնել հայ զինուորների ուրախութիւնը։

Տիկինը արժանի է շնորհակալութեան։

X.

Շամախու առաջնորդի ճառը

Պեատիգորսկ, 21 օգոստոսի

Ամսիս 17-ին Աստուածածնի Վերափոխման տօնին տեղիս հայոց եկեղեցում պատարագ մատուցեց Շամախու թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը, սպասաւորութեամբ Մեսրոպ վ. Մաքսուտեանի. տօնը կատարվեց վերին աստիճան շքեղ, որի նմանը գուցէ Պեատիգորսկը չէ տեսել. պատարագին, «Հայր-մերից» առաջ, Կարապետ սրբազանը մի շատ գեղեցիկ քարոզ խօսեց, որով առաջ բացատրեց տօնի նշանակութիւնը, յետոյ անցնելով քաղաքական ներկայ բացառիկ լուրջ դրութեան՝ յորդորեց ժողովրդին տոկունութեամբ տանել մինչև վերջը այս բոլոր հարուածը, աշխատանքով լրացնել պատերազմի պատճառած պակասը, օգնել զինուոր կոչվածներին ու նրանց ընտանիքներին։ Ահա այդ քարոզի ամփոփումը.

«Թնդանօթների որոտի, պօղպատների շաչիւնի, յաղթական կանչերի և վիրաւորների հեծեծանքների տակ, մենք այսօր դիմաւորում ենք ս. Աստուածածնի տօնը։

«Համաշխարհային ահեղ անցքերը տիրել են մեր բոլորի մտքերին ու զգացմունքներին։

«Մեր երկրի գլխին կախվել են մթագին ամպեր. կուլտուրական երկիրները ձուլվել են մի միութեան մէջ՝ ողջ աշխարհը կործանարար միլիտարիզմից ազատելու համար։

«Մեր ահեղ թշնամին սպառնում էր մեր երկրի ամբողջութեանը, և մենք ամենքս միացանք բարձր ձգտման մէջ մեր ոյժերը հայրենիքի օգնութեանը տալու։ Սակայն հարկը տալով պատերազմին, մենք չը պէտք է մոռանանք զէնքի կանչված և պատերազմ ուղարկված մեր եղբայրների՝ մեր խնամքին թողած ընտանիքների մասին։

«Փառահեղ բնութիւնը միատեսակ ժպտում է ամենքին և կանչում դէպի կեանք, որը տակաւին չէ կորցրել իր թովչութիւնը։

«Կենսաբեր արևը բոլոր ունևորներին կանչում է օգնութիւն ցոյց տալ չքաւորներին և առանց որևէ միջոցի թողնված որբերին։ Հազիւ թէ գտնվի մի ընտանիք, որի միջից որևէ մէկը մասնակցութիւն չունենայ ընդհանուր ժողովրդական պաշտպանութեան մէջ։

«Մի քանի ամսվայ ընթացքում 8 ուժեղ պետութիւններ արիւնահեղ կռւի են վարում. կան շատ սպանվածներ և վիրաւորներ։

«Բայց ինչ կը լինի մեր արիւնակից եղբայր-հայերի դրութիւնը Ասիայում, եթէ Թիւրքիան պատերազմ յայտարարի։ Օգնութեան մասին եղող հեծեծանքներին ու աղաղակներին վերջ չի լինի։

«Տասնեակ տարիների ընթացքում ժողովուրդները զինվում են աւելի ու աւելի ուժեղ թափով. այդ ժամանակի ընթացքում ժողովրդական մասսայական արիւնահեղ շարժումներ են եղել, որ խաղաղ ազգաբնակութեանը անհամար աղէտներ են հասցրել, մինչև որ կառավարիչ երկիրների լուսաւոր անձինք վերջ են դրել արիւնահեղութեան։ Մեր Ինքնակալ Պետը ձեռք ձեռքի տուած մեր դաշնակից երկիրների պետութիւնների հետ՝ ուխտել է վերջ դնել միլիտարիզմի խոլագար զօրութեան։ Կանցնեն ծանր օրերը, և մենք հաւատում ենք, որ երկրի վրա կը թագաւորի խաղաղութիւն, ժողովուրդների հանգստութիւն և բարօրութիւն։

«Աղօթենք Բարձրեալին, որպէս զի հնարաւորութեան չափ շուտ հասնի ցանկալի րոպէն. ամեն ինչ դէպի այդ է գնում, և ռուսական քաջարի զօրքի յաղթական երթը ցոյց է տալիս մեզ պատերազմի շուտափոյթ վերջանալը։

«Բայց քանի դեռ պատերազմը շարունակվում է, չը պէտք է թուլանալ հոգեպէս, այլ ընդհակառակը ամեն ոք պէտք է զբաղվի իր գործով և հանգիստ աչքով նայի ապագային։ Մեր դաշտերը, այգիները և ագարակները իրանց բերքն են բերել, պէտք է հաւաքենք դրանց, պէտք է կատարենք մեր կուլտուր-տնտեսական գործերը ընդհանուր բարեկեցութեանը աջակցելու նպատակով. մտքի, եռանդի և ձեռքերի աշխատանքները միացնենք ընդհանուր ժողովրդական շտեմարանին, որից պէտք է կերակրենք որբացած ընտանիքներին։

«Ներկայ րոպէն ցոյց տուեց մեզ, թէ իրանից ինչ ոյժ է ներկայացնում ժողովրդական գիտակցութիւնը և հայրենասիրական բարձր ոգին։

«Ընտելացրէք, վարժացրէք երիտասարդ սերունդը դէպի մայրենի եկեղեցին ունեցած սիրոյ մէջ, մայրենի լեզուին, մայրենի աւանդութիւններին, որոնք ամրացնում են ոգիները, ոգևորում մի ցանկութեամբ—պաշտպանել իր երկիրը թշնամիների յարձակումներից»։

Բոլոր կուրօրտներից մեծ բազմութիւն էր հաւաքվել. պատարագից յետոյ ժամւորներին հիւրասիրեցին եկեղեցու բակում մատաղով։ Յովսէփ Խօջայեան

Բերքը եւ կենսական մթերքների թանգութիւնը

Ծաղկունք (Նոր-Բայազ. գաւ.), 20 օգոստոսի

Շնորհիւ գարնան յորդառատ անձրևների՝ ցորենի և գարու բերքը առատ է. խոտը, որ արդէն հնձել են, այնքան առատ է, որ գիւղացիք չը կարողացան ժամանակին դաշտից կրել տուն և ստիպված եղան թողնել ու հասունացած արտերը հնձել։ Անցեալ տարի մի սայլ խոտը (40 խուրջ) ծախվում էր 13 ր. (ձմեռը գինը բարձրացաւ մինչև 24 ր.), հիմա ծախվում է 3 ր.։

Գիւղիս առևտրականները, օգտվելով ներկայ հանգամանքներից, կենսական մթերքները չափազանց թանգացրել են. թանգ են ալիւրը, նաւթը, շաքարը և կենսական միւս անհրաժեշտ մթերքները։ Ալիւրի պուդը ծախվում է 1 ր. 80 կ., նաւթի ֆունտը 12 կ., շաքարի ֆունտը 24 կ. և միւս բաները ծախվում են կրկնակի գներով։

Չարչիների այդ վարմունքի առաջն առնող չը կայ, և զուր տեղը փչացվում է աղքատ գիւղացին։ Մ. Բաբսեղեան

Արևի խաւարումը

Ծղնէթ, 15 օգոստոսի

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ արևի խաւարման տեսարանը, բարձրադիր տեղերում աւելի պարզ ու փառաւոր է լինում, յարմար համարեցի Թիֆլիսի մօտակայ բարձրադիր Ծղնէթ գիւղում կատարելու դիտողութիւններս։ Այդ գիւղը ծովի մակերևոյթից գտնվում է 3050 ոտնաչափ բարձրութեան վրա։ Իսկ ես բարձրացայ այդ գիւղից 124 ոտնաչափ աւելի բարձր տեղ։

Ես ահա իմ դիտողութիւնների արդիւնքը։

Խաւարումն սկսվեց ժամը 3-ին և 3 րոպէին։ Ջերմաչափը այդ միջոցին արևի տակ ցոյց էր տալիս 21 աստիճան։ Լուսինը արևմտեան կողմից սկսեց մտնել արևին և այդպէս սկսեց շարունակ անցնել նրա սկաւառակով, առանց արևի հիւսիսային մասը ծածկելու։ Այդ բոլորը կատարվեց 2 ժամվայ և 7 րոպէի ընթացքում, ծածկելով արևի 0,94 մասը։ Իսկ միանգամից՝ խաւարման ամենամեծ ծաւալման ժամանակ արևի 0,84 մասը միայն ծածկվեց և ոչ 0,94 մասը։

Այդ պատահեց 4 ժամ և 6 րոպէին։ Իսկ ջերմաչափը այդ միջոցին ցոյց էր տալիս 14 աստիճան, որով 1 ժ. և 3 րոպէի ընթացքում 7 աստիճան ցած էր իջել։ Երբ հեռաւոր և շրջակայ դաշտերին նայում էինք, արևի լոյսը արևի մայր մտնելուց յետոյ տեղի ունեցած սովորական նուազած լոյսին էր նման, միմիայն մի փոքր աւելի կանաչագոյնի էր փոխված։ Այս դիտողութեան ամբողջ ընթացքում ոչխարների հօտը հանգիստ արածում էր ամարանոցին կից դաշտում, սակայն հաւերը մտել էին հաւաբուն և աքաղաղները քանիցս սկսեցին կանչել։ Մակ. Ջմշկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Թագաւոր Կայսրը Բարձրագոյնս բարեհաճել է կարգադրել Ֆելիքս Վիլլօսերի Ամերիկեան Միացեալ Պետութիւնների հիւպատոս ճանաչել Բաթումում։

◆ Կիրակի, օգոստոսի 24-ին, ռուսաց զօրքի յաղթութեան՝ Լվով և Գալիչ քաղաքները վերցնելու առիթով՝ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում գոհաբանական մաղթանք կատարվեց։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդիր է յարուցել Կովկասի փոխարքայի առաջ, որ թոյլատրվի խորհրդին սեպտեմբերի 14-ին հրաւիրել իր ճիւղերի ներկայացուցիչների խորհրդակցութիւն՝ թէ լայն ծաւալ տալու ժողովարարութեան և թէ մշակելու նպատակայարմար եղանակ նիւթական օգնութիւն հասցնելու ծառայութեան կանչված պահեստի զինուորների ընտանիքներին և վիրաւորներին։ Այդ ժողովին հրաւիրվելու են և Բագուի Հ. Կուլտ. Միութեան ներկայացուցիչները։

◆ Ոստիկանական պաշտօնեաները որոշել են իրանց ստացած ռոճիկների 2°/₀-ը յատկացնել պատերազմից վնասվածների ընտանիքների օգտին։

◆ Քաղ. վարչութիւնը երկուշաբթի, ամսիս 25-ին, որոշել է մտնել ռուսական քաղաքների միութեան մէջ և Մոսկվայի քաղաքագլխին հաղորդել, որ քաղաքը իր հիւանդանոցային հաստատութիւններում վիրաւոր զինուորների համար կարող է յատկացնել մօտ 400 մահճակալ։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող կովկասեան կոմիտէը ստացել է հետևեալ նուիրաբերութիւնները. Կովկ. կոմիտէի գործավար Ա. Ա. Պալովից՝ 1400 ր., Թիֆլիսի Կոնտրոլի պալատի կառավարչից՝ 116 ր. 39 կ., իշխ. Ե. Ն. Բագրատիոն-Մուխրանսկիից՝ 200 ր., Ս. Գ. Լինդենից՝ 25 ր., Գիւղատնտեսական հողային բանկի անդրկովկասեան բաժանմունքից՝ 48 ր. 21 կ., Ն. Լ. և Ս. Գ. Պետերսոն ամուսիններից՝ 200 ր., Հ. Բ. Ընկ. Աբասթումանի ճիւղից՝ 100 ր. 14 կ.։

◆ Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհու տեղական պահեստի օգտին ստացվել է Պ. Ր. Կեզելից 25 ր., իշխ. Ե. Ն. Բագրատիոն-Մուխրանսկիից՝ 200 ր., Ս. Գ. Լինդենից 25 ր.։

◆ Կրուժոկում լոտոյից և թղթախաղից, օգոստոսի 5-ից մինչև 15-ը, պատերազմից վնասվածների օգտին հաւաքվել է 218 ր. 85 կոպէկ։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կոմիտէի գործադիր յանձնաժողովը պահեստիների ընտանիքներին քաղաքի կողմից արդէն նպաստ է տուել 7000 ր.։

◆ Պահեստիների ընտանիքներին խնամող քաղ. գործադիր յանձնաժողովի անդամները քաղ. կոմիտէին տրված խնդրագրերի համաձայն դիտել են 3000 ընտանիքից աւելի, կանոնաւոր նպաստ տալու համար։

◆ 1-ին և 6-րդ տղայոց գիմնազիաների մանկավարժական կազմը և ծառայողները որոշել են պատերազմի ընթացքում իրանց ստացած ռոճիկների 1°/₀-ը յատկացնել պահեստիների ընտանիքների օգտին։

◆ Քաղաքի դպրոցներից շատերում բացվել են վերաքննութիւնները։ Դրա հետ միաժամանակ կատարվում են և նորեկների ընդունելութեան քննութիւնները։ Սեպտեմբերի սկզբից բոլոր դպրոցներում կը սկսվեն կանոնաւոր պարապմունքները։

◆ Կարիքաւոր ուսանողներին օգնող կովկասեան ընկերութեան վարչութիւնը մօտ 300 ր. նպաստ է տուել այդպիսի ուսանողների՝ իրանց կրթավայրը հասնելու համար։

◆ Հացթուխները հացի սակագին աւելացնելուց յետոյ, սկսել են աւելի վատ տեսակի հաց թխել, քան առաջ։ Անցեալ օրը 5-րդ քաղաքամասում առևտրա-տնտեսական գործակալները թոնրատներից մեծ քանակութեամբ վատ տեսակի թխված հաց էին հաւաքել ոչնչացնելու։ Չը նայելով սակայն այդ հանգամանքին, թոնիրներում շարունակվում է կիսաթխված հացերի վաճառումը, ուստի անհրաժեշտ է, որ այդ տեսակ հսկողութիւնը աւելի ուժեղ կերպով կատարվի և միւս քաղաքամասերում։

◆ Օգոստոսի 25-ից պահեստիների ընտանիքներին նպաստներ տալու գործը կատարվելու է առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը քաղ. գնահատողական դահլիճի շէնքում, իսկ երեկոյեան ժամը 7-ից մինչև 10-ը՝ քաղ. վարչութեան շէնքում։

◆ Բարեգործ անձանց ուշադրութիւնն ենք հրաւիրում մի վերին աստիճանի թշուառ ընտանիքի վրա, բաղկացած մի հիւանդ մօրից և 5 մանր զաւակներից։ Ընտանիքի կերակրողը և տէրը՝ գրաշար Սահակ Պետրոսեան, այս տարի յուլիսի 22-ին անգթօրէն սպանվում է «Էպօխա» տպարանում մի սրիկայ ոճրագործ պատանու ձեռքով։ Նա էր ամբողջ ընտանիքին գոնէ չոր հաց մատակարարողը իր չարքաշ աշխատութեամբ։ Նրա մահից յետոյ թշուառ կինը, ինքն հիւանդ, ծախել է այն մի քանի խեղճ կահ կարասին, որ գտնվում էր տան մէջ, փոքրիկ երեխաներին գոնէ հաց տալու համար։ Այժմ ամեն ինչ վերջացել է. երեխաները ուղղակի տառապում են քաղցից։ Խնդրվում է մարդասէր անձերից օգնութեան հասնել թշուառ ընտանիքին, ուղարկելով նուէրները «Մշակի» խմբագրութեան։ Եթէ գտնվէին անձինք, որոնք վերցնէին կամ որդեգրէին երեխաներին, աւելի լաւ կը լինէր։

◆ Շաբաթ, օգոստոսի 23-ին, արտասահմանից վերադարձան նաև ինժեներ Ի. Ի. Կօզնովիցկի և երդ.-հաւ. Ա. Վ. Կուզիկովը։ Դումայի իրաւաբան Ս. Ա. Գալստեան, որ դուրս է եկել Պարիզից յուլիսի 23-ին, ճանապարհին մնացել է 26 օր։ Ճանապարհին Մարսէյլից մինչև Օդեսսա, այն նաւը, որով գալիս էր եղել Գալստեան, Մալտա կղզու մօտ հանդիպել է ծովային կռւի անգլո-ֆրանսիական և աւստրիական նաւատորմերի միջև, և այդ պատճառով հարկադրված է եղել կռւի ամբողջ ժամանակը մնալ Մալտա կղզու մօտ։

◆ Նահանգապետը շտապ քաղ. վարչութեան է ուղարկել Թիֆլիսի համքարների վարչութեան զեկուցումը, զանազան արհեստի համքարների 223 խնդրագրերի հետ միասին, որոնցով նրանք խնդրում են փոխել մօտ ժամանակներս հրատարակած իրանց համար ծանր պարտադիր որոշումները ծառայողների նորմալ հանգստի մասին։ Նահանգապետը իր կողմից առաջարկում է վերամշակել այդ որոշումները և դումայի առաջիկայ նիստերից մէկում քննութեան առնել։

◆ Մեզ խնդրում են տպել, որ ժողովրդական համալսարանի ընկերութեան վարչութեան անդամները և սեկցիաների ներկայացուցիչները հրաւիրվում են վարչութեան ամարային արձակուրդներից յետոյ, առաջին ժողովին, որը կայանալու է հինգշաբթի օրը, ամսիս 28-ին, Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան շէնքում։

ԿՈՎԿԱՍ

◆ Կովկասի հայաբնակ զանազան վայրերից մեզ շարունակ տեղեկութիւններ են հասնում կատարված այն մաղթանքների մասին, որոնք տեղի են ունենում հայ հոգևորականութեան նախաձեռնութեամբ և հայ հասարակութիւնների մասնակցութեամբ՝ Թագաւոր Կայսրի արեւշատութեան և ռուսական զէնքի աջողութեան համար։ Այսպէս, ի միջի այլոց, մեզ գրում են Թէոդոսիայից (Ղրիմ), ուր թէ հայ և թէ հայ-կաթոլիկ հոգևորականութիւնները տեղական իրանց եկեղեցիներում ամսիս 3-ին և 6-ին կատարել են հանդիսաւոր մաղթանքներ։ Մաղթանքներ տեղի են ունեցել նաև՝ երկաթուղու Ջաջուռ կայարանում (Ալեքսանդրապօլի գաւ.) և Ծաղկունք գիւղում (Նոր-Բայազէտի գաւ.) ամսիս 17-ին, իսկ Նախիջևանիկ (Շուշու գաւ.), Մարտակերտ

(Ջիվանշիրի գաւ.), Ղրղի (Շամշադինի գաւ.) գիւղերում՝ ամսիս 10-ին։

✦ Մեր ընթերցողներին արդէն յայտնի է, որ Թիւրքահայ օդաչու Երուանդ Նազարեանը դիմել էր կառավարութեանը, խնդրելով որ, անկախ իր հպատակութեան հարցից (Թիւրքահպատակ է), ռուսական գործող զօրաբանակին օգտվի նրա ծառայութիւնից։ Այժմ Պեատիգորսկից մեզ հաղորդում են, որ կառավարութիւնը յարգել է նրա խնդիրը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ջխար, 17 օգոստ.

Յօգուտ Ջխարի հրկիզեալների կ. Հ. Բ. Ընկ. Ջխարի ճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ Կ. Հ. Բ. Ընկ. Արասթամանի ճիւղի վարչութիւնից 15 ր., Բաթումից՝ Միք. Մեսրոպեանից 10 ր., Վասիլ Խարազեանից՝ 2 ր., Ալ. Խարազեանից՝ 50 կ., ընդամենը 27 ր. 50 կ., առաջվայ ստացածների հետ միասին՝ 75 րուբլի 90 կոպէկ։

Կ. Հ. Բ. Ընկ. Ջխարի ճիւղի վարչութիւն

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՑՈՅՑԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Թաւրիզ, 4 օգոստոսի

Երէկ, կիրակի, օգոստոսի 3-ին, Թաւրիզի հայ հասարակութեան բուռն ցանկութեամբ, առաջնորդարանի կողմից տրված տպագիր յայտարարութեան համեմատ, երկսեռ հոծ բազմութեան ներկայութեամբ, պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր մաղթանք Բերդաթաղի մայր եկեղեցում ռուսաց զէնքի աջողութեան համար։ Մաղթանքին ներկայ էին ռուսաց զինուորական բոլոր օֆիցէրները, բանկային և հիւպատոսարանի պաշտօնեաները իրանց տիկիններով։ Եկեղեցում տեղ չը լինելու պատճառով, հասարակութեան մեծ մասը կանգնած էր եկեղեցու բակում։ Բակում կանգնած էր նաև ռուսաց զինուորական նուագախումբը։ Եկեղեցում Թեմակալ Ներսէս վ. Մելիք-Թանգեան խօսեց ոգևորված քարոզ ի վեր հանելով ռուսաց մեծազօր Կայսրների գործ դրած մարդասիրական զոհաբերութիւնները քրիստոնեայ փոքր ազգերի ազատագրութեան համար բռնապետական լծից. Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան, Յունաստանը և Չերնոգորիան կենդանի վկաներ են ռուսաց սրի յաղթութեան յանուն ազատութեան։ 17-րդ դարից սկսած մինչև այսօր հայ ժողովուրդը վայելել է ռուսաց հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը. Հայաստանի վերջին բարեկարգչական գործը պարտական ենք միայն ռուսաց պետութեան ջանքերին. այսուհետև էլ հայը կը վայելէ անշուշտ Թագաւոր Կայսրի հովանաւորութիւնը։ Հայ ժողովուրդը,—յիշատակեց հայր սուրբը,—իր ճակատագիրը անքակտելիօրէն կապված դաւանելով ռուսաց մեծազօր պետութեան ճակատագրի հետ՝ պատրաստ է հաւատարմութեամբ ծառայել ռուս ազգի հետ փորձութեան օրերում հայրենիքի, Մեծ Ռուսաստանի ապահովութեան համար։

Որպէս զի ներկայ ռուս հասարակութիւնը անմասն չը մնար քարոզի արտայայտած մտքերին, Թեմակալ Մելիք-Թանգեան ռուսերէն լեզուով ևս կրկնեց քարոզի բովանդակութիւնը և դրանով մեծ բաւականութիւն պատճառեց ռուս հասարակութեան։

Մաղթանքի աւարտումից յետոյ, ռուսաց հիւպատոս պ. Օրլով հասաւ և բարձրացաւ առաջնորդարան անվերջ օվացիաների միջով։ Երաժշտախումբը նուագում էր ռուսաց հիմնը. ուռաները և ուրախ բացագանչութիւնները անվերջ էին։ Եկեղեցու բակից հսկայ պրոցեսը՝ նուագածուների ընկերակցութեամբ՝ ուղղվեց դէպի ռուսաց հիւպատոսարանը, դեռ եկեղեցու բակից հայ ինտելիգենցիան ձեռների վրա բարձր պահած Օրլովին նստեցրեց կառքում։ Ռուսաց հիւպատոսարանում ցոյցը չափազանց հետաքրքրական էր. արտասանվեց հայերի կողմից ռուսերէն ճառ. իսկ երկսեռ բազմութիւնը «կեցցէ Ռուսաստանը, կեցցէ Ցարը» գոռումներով թնդացնում էր օդը։ Գեներալ-հիւպատոսը մի քանի խօսքով յայտնեց շնորհակալութիւն։

Մօտ 2000 հոգուց բաղկացած թափօրը գնաց անգլիական հիւպատոսարանը, ուր բացակայ էր հիւպատոսը գիւղ գնալու պատճառով։ Այստեղ ևս «կեցցէ Անգլիան, կեցցէ Ռուսաստանը, կեցցէ Ֆրանսիան» բացագանչութիւններից յետոյ՝ ցուցարարները առաջացան Լիլաւայի ֆրանսիական հիւպատոսարանը։

Պրոցէսը գնալով ստուարանում էր. մարսէյլէզի նուագածութիւնը, եռագոյն դրօշակները, հայ ամբոխի գոռում գոչումը «vive la France, vive la Russie, vive le Grand Britanique» թնդացնում էին աշխարհ. պարսիկ ամբոխն հազարներով հանդիսատես էր փողոցի գլուխներում ողջունելով հսկայ թափօրը։

Թափօրը կանգ առաւ ֆրանսիական հիւպատոսարանի առաջ. հիւպատոս պ. Նիկոլա Ֆրանսիացին յատուկ խանդավառութեամբ ընդունեց ցուցարարներին. գործի գլուխ անցած հայ երիտասարդութիւնը ձեռքերի վրա ման ածեց հիւպատոսին. փոխ առ փոխ երգում էին նուագածուներն և երիտասարդների խումբը մարսէյլէզ, ռուսաց հիմնը, «Մեր Հայրենիք» և այլն։ Ցոյցն այնչափ ուշագրաւ և զուարթ էր, որ պ. Նիկոլա յուզված մի քանի խօսք միայն արտայայտեց լեզը զգացումներով։ Հայերը խօսեցին ֆրանսերէն և հայերէն [illegible] ճառեր և առաջ բերին բուռն ոգևորութիւն։ Ոգևորութեան մէջ հսկայ թափօրը չը մոռացաւ աղաղակել «անկցի Գերմանիան, անկցի Վիլհէլմը» սակայն թափօրի խոհեմ ղեկավարները արգելք հանդիսացան անախորժ գործողութիւններին։

Ուրախ, զուարթ և համակրելի ցոյցից յետոյ հասարակութիւնը ցրիւ եկաւ՝ նուագածուների աշխույժ ձայնով։

Ընդհանրական ոգևորութիւնն աննկարագրելի է։

Հայ տիկինների նախաձեռնութեամբ հայ կանանցից կազմվեց երկու յանձնախումբ. առաջինը ռուսաց Կարմիր Խաչի անունով կատարում է հանգանակութիւն և մինչև այժմ հանգանակել է 1000 րուբլու չափ մի գումար և դեռ շարունակում է. իսկ տիկինների երկրորդ յանձնախումբը պաշտօն ունի հանգանակութեան դրամներով սպիտակեղէն պատրաստել վիրաւոր ռուս զինուորների համար։

Միակ տխուրն ու մաղձոտը գերմանացիներն են, ի շարս որոց նաև գերման հիւպատոսը, որոնք թուրքերի մէջ չարաչար նենգ պրօպագանդա են անում—ինչպէս հաւաստիացնում են մեզ—Պարսկաստանի հայերի դէմ, համարելով նրանց վտանգաւոր տարր Պարսկաստանի համար։

Մենք հաւատացած ենք անկասկած, որ մեր պարսիկ հայրենակիցները՝ լաւ ճանաչած լինելով չարամիտ գերմանացիների յոռի դիտաւորութիւնները, ոչ մի նշանակութիւն չեն տալու նրանց մոլորեցնող պրօպագանդային։

Երէկվայ մաղթանքից յետոյ Թեմակալ Մելիք-Թանգեան հետևեալ հեռագիրն ուղարկեց Կովկասի փոխարքային.

«Նորին Պայծառափայլութիւն փոխարքային։

«Այսօր հանդիսաւոր պատարագից յետոյ հայոց եկեղեցում կատարվեց մաղթանք ահագին բազմութեան ներկայութեամբ՝ ռուսաց զէնքի աջողութեան համար։ Ամենայարգոյաբար խնդրում եմ ձերդ պայծառափայլութեան բարեհաճել արկանել առ ոտս Նորին Մեծութեան՝ Ատրպատականի հայերի անսահման երախտագիտութեան զգացումները»։

Տասն օրից աւելի է Ղարադաղի Բէյվանի հայերը թափվել են Թաւրիզ։ Բէյվանը վերջերս գնել է մուշտէյիդ Հաջի Միրզա Հասան աղան։ Կեղեքումներն ու անտեղի հարկերը չափ չունին. հիւպատոսի միջոցով սպասվում է հրաման առնել նահանգապետից, նախկին ձևով հարկերը վճարելու համար։ Դեռ հրաման ստացված չէ։ Հայկազուն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՑՔԻՑ

Թիւրքական պատերազմական պատրաստութիւնները

Երզրում, 10 օգոստոս

Գրած էի, որ Թիւրք կառավարութիւնը դրամական ամենաանձուկ վիճակին ունի. պատերազմը առանց դրամի չըլլար։ Խաղաղ ժամանակ անգամ, երբ Թիւրք բանակը դեռ ներկայ զօրքի $1/3$-ն անգամ չունէր, ան զանոնք կերակրելու, ռոճիկները տալու համար ստիպուած էր ամեն տարի և տարին քանի մը անգամ ժողովրդի՝ կառավարութեանը տուած այս կամ այն տուրքը յատկացնել հանրային պարտուց վարչութեան, երբ երաշխաւորութիւն այս կամ այն երկրէն առած փոխառութեան համար և այսպիսով դնել Թիւրքիան ու իր ամբողջ ժողովուրդը եւրոպական պետութիւններու դրամական գերիշխանութեան ներքոյ։ Թիւրք կառավարութիւնը ցայսօր, փաստօրէն, գոյութիւն չունէր. ան՝ եւրոպական պետութիւններու կողմէ տեսակ մը նշանակեալ ժառանգական պաշտօնէութիւն էր, գործակատարի դերին մէջ, որ միայն պաշտօն ունէր եւրոպացիներու դրամները գանձել և ըստ պատկանելոյն հասցնել. և որովհետև ան այդ պաշտօնին համար գերադաս մարմիններէն ռոճիկ չէր ստանար, ինքն ալ ապրիլ կուզէր, ուստի՝ բացի այդ գանձումներէն՝ նոր նոր ապօրէն գանձումներ ալ պիտի ընէր իր գոյութիւնը ապահովելու համար, ինչպէս և կընէր։

Եւրոպային—կամ, ուրիշ խօսքով, հանրային պարտուց վարչութեան—յատկացնելով բոլոր տուրքերէն եկած եկամուտները, ինչպէս օրինակ՝ աղի, խմիչքներու, ցանցանակներու, բերքի տասանորդներու, աղնամի (կենդանիներու վրան դրուած տուրքի), զինուորական տուրքը, և այլն և այլն և նոյն իսկ (վերջերս նեղը ինկնալով և այլ ևս փոխառութեան յոյսը կորսնցուցած) կըրթական տուրքի անունով ի սկզբանէ ցայսօր գանձուող, բայց ժողովրդական կրթութեան համար հատ փարա մը չծախսուող եկամուտը. ան այժմ ոչինչ ունի իբր երաշխաւորութիւն եւրոպացիներուն տալու, նոր փոխառութիւն կնքելու համար, եթէ նոյնիսկ Եւրոպան այժմ պատերազմով բռնուած չըլլայ և հնարաւորութիւն ունենայ անգամ Թիւրք կառավարութեան այդ փոխառութեան ընդառաջ երթալու։ Թիւրք կառավարութիւնը իր կատարեալ սնանկութիւնը, եւրոպական գերիշխանութեան ստորադաս մարմին ըլլալը շատ լաւ կը զգայ ու կը հասկնայ. և այսօր, երբ իր պահանջատէրերը իրար միս կը կրծեն, ան իր բոլոր ճիգերը կը լարէ ազատագրուելու անոնց խնամատարութենէն և ինքնիշխան դառնալու. իսկ այդ բանին մէջ անոր կօգնէ իր պահանջատէրերէն մէկը՝ Գերմանիա։ Գերմանական օգնութիւնը նիւթականի տեսակէտէն անկասկած խոշոր չի կրնար ըլլալ. ան աւելի շատ բարոյական պիտի ըլլայ. իսկ բարոյականը որքան ալ լաւ է, ձեռնտու է, բայց փոր չի կշտացներ. զինուորը հաց կուզէ, հացի և այլ պէտքերու անհրաժեշտութիւնը պիտի հոգացուի... Աղբիւրը... Դուրսէն ոչինչ պէտք է սպասել. կը մնայ ժողովուրդը, ան ալ իր կառավարութեան նման սընանկութեան հասած է. բայց կառավարութիւնը տուր չի նայիր. ան իր անկախութիւնը պիտի ձեռք բերէ, թէկուզ ան գնուի ժողովրդի արիւնով ու տնտեսութեան վերջնական լիկվիդասիօնով։ Թիւրքիոյ իմաստուն վարիչներու նոյնքան իմաստուն այդ ուղղութեամբ գործելակերպը իր կարուկ որոշումը տուեր է այդ հարցի վերաբերմամբ, և ասով կը բացատրուի այն հանգամանքը, որ այսօր Թիւրքիոյ գիւղական ամբողջ ազգաբնակութեան վրայ կառավարութեան հրամանով չափազանց սպաննիչ ու տնտեսութիւնը քայքայող որոշում մը կը գործադրուի՝ ողողուած հազարաւոր անէծքներու, արիւն-արցունքներու հետ։

Այդ որոշումը հետևեալն է.

«Զօրքի հացը (ուտելիքը) պիտի հայթայթէ ոչ զէնքի տակ գտնուող ժողովուրդը. ան (իր վճարելիք տասանորդէն դուրս) պիտի իր բերքին մէկ խոշոր մասը յատկացնէ պատերազմին դրութեան մէջ գրուած երկրի զինուորներու ապրուստին»։ Ատոր համար (ըստ քանակի ազգաբնակութեան) ամեն գիւղի վրայ հացի որոշ նոր տուրք է դրուած. ան շուտափոյթ պիտի իր տուրքը վճարէ տեղական հիէթը իխտիարիէին (ծերերու ժողովին), որ իր կարգին գիւղացիներու միջոցներով պիտի փոխադրէ այնտեղ՝ այն վայրը, որ կը ցուցուի անոր կառավարութեան նշանակուած յատուկ պաշտօնէին կողմէ։

Ես չեմ ուզեր բացատրել թէ որքան վանդալական է ներկայ պարագաներու ու պայմաններուն մէջ նման որոշման գործադրութիւնը, չեմ ուզեր նորէն ծանրանալ այդ պայմաններուն վրայ, վասն զի այդ պայմանները—և այն ալ այս զօրահաւաքի ու պատերազմի պատրաստ շրջանին մէջ—քաջ յայտնի են ձեզի. չեմ կրնար միայն չըսել, որ այդ նոր ազդուեր, ձախաւեր որոշմամբ ու անոր գործադրութեամբ կառավարութիւնը երկիրը պիտի հասցնէ այն ծայրայեղ չքաւորութեան ու թշուառութեան, որմէ ազատելու և ժողովրդին վիզն ու մէջքը ուղղելու համար 50 երկար ու ձիգ տարիներու մինչև անգամ խաղաղ ու ապահով պայմաններու աշխատանքը ինքզինքն անզօր պիտի զգայ իբրև գրաւական հրապարակ գալու և իր խօսքը, հաստատ խօսքը ըսելու, երբ երաշխիք ծառայելու։ Ա. Կ.

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ*)

Կ. Պոլիս, 1 օգոստոս

Միւս կողմէն շշուկներ ու զրոյցներ իրարու կը յաջորդէին։ Կըսուէր թէ Թիւրքիոյ վերջնագիր տրուած է իր զօրքերը ցրուելու համար, մինչ Թիւրք թերթերը կը հերքէին։ Անձկութեան մէջ էր ամբողջ ժողովուրդը և անհամբեր կը սպասէր անակնկալներու։

Արդարև յուլիս 30-ին առաւօտուն կայսեր կողմէն հրատարակուեցաւ իրադէ մը, որու տարտամ ոճէն ոչինչ կը հասկցուէր և որուն կցուած էր Էնվէր փաշայի մէկ յայտարարութիւնը**)։

Էնվէր փաշայի յայտարարութիւնը ի սկըզբան կարծուեցաւ թէ զօրացրումի մը սկզբնաւորութիւնն էր և արդիւնք արտաքին ճնշումի մը կամ պատերազմի սպառնալիքին, սակայն մի քանի օր յետոյ խընդիրը լուսաբանուեցաւ։

Ասիկա զօրացրում մը չէր, այլ բաց դուռ մը, ընդհանուր զօրահաւաքութենէն կարգ մը դասեր ու գաւառներ զերծ կացուցանելու համար, վասնզի Կոնիայի, և ուրիշ քանի մը գաւառներու մէջ ըմբոստութիւններ առաջ եկած էին և զինուորագրուիլ մերժած էին։ Կայսերական իրադէին մէջ հնազանդութեան համար եղած պատուէրները այս զրոյցները հաստատելու բնոյթ ունէին։ Զօրացրումը բոլորովին սխալ ըլլալն ալ շուտով հաստատուեցաւ յաջորդ երկու օրերուն մէջ հրատարակուած մի քանի զեկոյցներէ, որոնց տեղական լրագիրներու պաշտօնապէս հաղորդուեցան։ Անոնց մէջ կը շեշտուէր, թէ միայն աւելորդները պիտի արձակուին շարքերը լրանալէ յետոյ և թէ զօրահաւաքութիւնը կը շարունակուի ըստ առաջնոյն։ Սակայն պատերազմին հաւանականութիւնները հետզհետէ կը նուազին՝ գերմանական պարտութեան լուրերու հետզհետէ հասնելէն։ Ֆրանսացոց մինչև Միւլհաուզէն առաջանալը, Լիէժի շուրջ գերմաններու կրած պարտութիւնները, որոնք Վօլֆ գերման գործակալութեան կողմէ շարունակ կը հերքուէին, այլ սակայն զանազան աղբիւրներէ կը հաստատուէին, վհատութեան մէջ կը ձգէին Թիւրքերը, որոնք չէին ուզեր հաւատալ գերմաններու պարտութեան, մինչ ընդհակառակը ըլլալով՝ բոլոր քրիստոնեայք—հայերը, յոյները և այլն—ռուսասէր, անգլիասէր և ֆրանսասէր տրամադրութիւններ ցոյց կուտան, չարացնելով Թիւրքերը, որոնք Գերմանիոյ անկումին մէջ կը տեսնեն նաև Թիւրքիոյ վախճանը։

Առայժմ Թիւրքերը և քրիստոնեաները վճռական չեն իրենց ենթադրութեանց մէջ, վասնզի հեռագիրները իրար կը հերքեն, և իսլամները իրենց ուզածին և քրիստոնեաները իրենց փափագին համաձայն կը մեկնեն այս հակասական լուրերը։

Այսօր սակայն Թիւրքերը ենթարկուեցան մեծ ցաւի մը, վասնզի առաջին անգամ ըլլալով անգլ. ընդհ. հիւպատոսարանը այսօր հետևեալ զեկոյցը փակցուց իր դրան վրայ. «Լօնդօն, օգոստ. 13։ Մեծ նաւամարտ մը տեղի ունեցաւ Հիւսիսային ծովուն մէջ։ Գերման 22 մարտանաւ ընկղմեցան, իսկ անգլիացիք կորուսին չորս միութիւն»։

Այս լուրը՝ որ պաշտօնական էր, Թիւրքերուն ալ պարտութիւնն էր։

Սակայն Թիւրքիոյ արդի վարիչներն այնքան յանդուգն, այնքան վայրագ, այնքան բաղդախնդիր ու անգութ են, որ առանց այս ձախող պայմանները նկատելու կրնան նետուիլ արկածախնդրական պատերազմի մը մէջ և առաջ բերել կործանում և աւեր։ Հետևաբար այժմէն ոչինչ կրնայ ըսուիլ վճռական։ Հայօրդի

---

*) Տես «Մշակ» №№ 185 և 186.

**) Այդ իրադէն և այդ յայտարարութիւնը տպված են «Մշակի» անցեալ համարում (№ 186)։ Խմբ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՐԵՇԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՐԵՇԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—78

Ատամնաբուժարան
Հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-ատամնաբոյժներ, բժ. վերաբոյժ Ռ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ [illegible] աշխատանքներ և շատ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
Մանկական Երգերի
Երկրորդ գրքոյկը.
Եւրոպական նոտաներով։ Հայոց դպրոցների համար։ Գինն է 25 կոպ.։
Վաճառվում է Թիֆլիսի հայ գրախանութներում։
Հեղինակից ստանալու համար դիմել՝ Э
міадзинъ, Академія. Преподавателю А.
789. Теръ-Осепянцъ. 6—3

Ներսիսեան դպրոցի հրատարակութեամբ
Լոյս տեսաւ
ՀԱՅ ԼԵԶՈՒ
(Հայոց միջնակարգ դպրոցների Գ. դասարանի դասագիրք և Բանահիւսութեան տ
սութիւն)։
Կազմեց Գ. ՀՈՎՈՒԵԱՆ, դասատու Ներսիսեան դպրոցի։
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ։
(Կ.Հ.) 3—3

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30
3) ԿԱՑԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1
5) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱ
ՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ I-ԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻ
Երկսեռ անձանց համար
(XV տարի)
Դասընթացքները գտնվում են Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ։
Դասընթացքներում աւանդվում են իտալական կրկնակի սիստեմով հաշւապահութիւն համապատասխան արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առևտ. թւաբանութիւն, ռուս. թղթակցութիւն, առևտ. իրաւունք, սղագրութիւն և ցանկացողներին սովորեցնում են գրող մեքենայի վրա։
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 15-ից 1914 թ.։
Դասընթացքները տևելու են 5 ամսից ոչ աւելի։ Դասընթացքներն աւարտողները ստանում են ատեստատներ։ Զբաղմունքները երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Վճար 40 ր. ամբողջ դասընթացքի համար։
Խնդրագրերը յանուն Թիֆլիսի Առևտրական Դպրոցի վերատեսչի ընդունվում դպրոցի դիւանատանը առ. ժ. 9-ից մինչև ցեր. ժ. 2-ը։
(օ.մ.) 802. 10—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հայոց Ազգագրական Ընկ. հրատարակութեամբ
Հայաստանի աշխարհագրութիւն
Կազմեց Ա. Տէր-Յակոբեան, նախկին ուսուցիչ Հայաստանի աշխարհագրութեան Ներսիսեան դպրոցում։
300 երես, բազմաթիւ պատկերներով և քարտէզներով։
Գիրքը, որ 33 տարվայ աշխատութեան արդիւնք է, կարող է ծառայել թէ՛ իբր ԴԱՍԱԳԻՐՔ, որովհետև էական մասը տպված է խոշոր (№ 12) տառերով և ի նկատի առնված դպրոցական ծրագիրը և թէ իբր օժանդակ ձեռնարկ Հայոց պատմութեամբ պարապողներին, որովհետև բազմաթիւ պատմական տեղեկութիւններ և նկարագրութիւններ տպված են մանր (№ 10) տառերով։
Ազգագրական Ընկերութիւնը ցանկանալով ամեն կերպ նպաստել Հայաստանի աշխարհագրութեան ուսուցման, մանաւանդ որ բացի կազմողին հոնօրար չը վճարելուց, տպագրութեան ծախսն էլ նուէր է ստացել նրանից, գրքի գինը նշանակում է չափազանց արժան՝ 50 կոպէկ, իսկ ուղղակի Ընկերութեան գրասենեակից (Лермонтовская 1, Тифлисъ) գնողների համար ԳԻՆՆ Է ՄԻԱՅՆ 35 ԿՈՊԷԿ։ 801. 3—3

ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
ԳՐԻԳՈՐԻՍ ա.-քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
1) «ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ», ըստ Գօլդէնբէրգի, I մասն. I և II տարի, 9—17 տիպ. 30
2) «ՆՈՑՆԵՐ», II մասն, III և IV տարի, ըստ Գօլդէնբէրգի, 5—9 տիպ. 35
3) «ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ», II տիպ. պատկերազարդ. 50
4) «ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ», II տիպ. 50
5) «ՏԱՐՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ», շատ դիւրամատչելի, ամբողջ կուրս. 60
6) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ». 1 ր.
Վաճառվում են իր մօտ (Грибоѣдовская, 20) և «Կենտրոնական», «Գիր» ու «Գուտտենբերգ» գրավաճառանոցներում։ Հեղինակից գնողներին 30% զեղչ. կարելի է ստանալ վերադիր վճարով։ Դրանք բոլորն էլ մեր դպրոցներում ընդունված են։ 790. 6—

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный